



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՅՔ

N-39, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012թ.

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուն թողարկվում է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից «Կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական նախաձեռնությունները. գենդերային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում» ծրագրի շրջանակներում և նպատակաուղղված է կանանց քաղաքական ակտիվության բարձրացմանը և քաղաքացիական նախաձեռնությունների զարգացմանը:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՎ ՁՈՒԳԱԿՇՈՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Լիլիթ Չաքարյան, Քաղաքական կուսակցությունների ծրագրերի վերլուծությունը վեր հանեց դրանց գենդերայնորեն չեզոք նկարագիրը	2
Գայանե Արմաղանովա, Հասարակական կազմակերպությունների գործունեությունը նպաստում է կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը	6

ԿԱՆԱՅՔ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՎԱՐԳՈՒՄ

Գայանե Մերոյան, Կանանց մասնակցության կարողությունների հզորացումը՝ տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման նախադրյալ	9
Ադունիկ Հազրյան, Կինը՝ դեկավար տեղական ինքնակառավարման մարմիններում	12
Ռուզաննա Տոռոզյան, Պետք է քայլ առ քայլ առաջ գնալ	13

ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Հարություն Մարգարյան, Ձրադավածության և աշխատաշուկայի տարբեր հատվածներում էական գենդերային անհաշվեկշռվածություն կա	15
Գարիկ Սիրոյան, Կանայք փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում. միտումներ և հիմնախնդիրներ	18
Արմեն Ներսիսյան, Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ բնակիչների բարօրության նպատակով լուծելու տեղական նշանակության հարցերը	21

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՁԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ

Արմենուհի Կյուրեղյան, Ժողովրդավարական պետության կայացման բարդ և դժվարին ճանապարհին հասարակական կազմակերպություններին էական դեր է վերապահված	24
Անահիտ Խաչատրյան, Քաղաքային և գյուղական համայնքները չեն կարող միայնակ իրականացնել կառավարության կողմից հաստատված գենդերային քաղաքականությունը	26
Անահիտ Աղոյան, Ասոցիացիայի մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացումը արդիական հիմնախնդիր է	28

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԳՐԱԳԱՐԱՆ	31
--	----



ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅՈՒՅՄԱՆ ԵՎ ԶՈՒԳԱԿՇՈՒՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Օրենսդիր և գործադիր իշխանության մեջ անհրաժեշտ գիտելիքներ և քաղաքական աշխատանքի փորձ ունեցող բավարար թվով ներկայացված կանայք միայն կարող են նպաստել որոշումների կայացման մշակույթի փոփոխմանը և ազդել այդ որոշումների բովանդակության ու որակի վրա:

2012-2013 թթ. խորհրդարանական, նախագահական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն արդիական դարձրեցին կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը թե՛ նրանց պատասխանատվության, թե՛ մեր երկրի համար կարևոր քաղաքական գործընթացների վրա ազդեցության ուժեղացման տեսանկյունից:

Համաշխարհային փորձը վկայում է, որ հասարակության և կանանց ակնկալիքները կապված են խաղաղության, կայունության և սոցիալական բարեկեցության ապահովման հետ: Դա պայմանավորված է նրանով, որ կանայք, մի կողմից, ավելի հակված են երկխոսության ու փոխզիջման և ունակ են խաղաղություն ու կայունություն ապահովելու հասարակությունում: Մյուս կողմից՝ ընթացիկ, առօրյա կյանքի խնդիրները, սոցիալական հարցերն ավելի մոտ են կանանց: Երկրում տիրող ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում նման մոտեցումն ավելի քան պահանջված է հայ հասարակության կողմից:

Ընտրությունները հասարակության ժողովրդավարացման գործընթացի կարևորագույն մասը դարձան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐ ՀԱՆԵՑ ԴՐԱՆՑ ԳԵՆԴԵՐԱՅՆՈՐԵՆ ՉԵԶՈՔ ՆԿԱՐԱԳԻՐԸ



Լիլիթ Զաքարյան

*Համալսարանական կրթությամբ կանանց
սոցիալագիտության փոխնախագահ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու*

Կանայք քաղաքականությանը մասնակցելու օրինական իրավունք ստացան միայն XX դարի սկզբին, սակայն մինչ օրս աշխարհի երկրների մեծ մասի քաղաքական էլիտայում հիմնականում տղամարդիկ են: Կանանց քաղաքական մասնակցության աստիճանով կարելի է դատել հասարակության ժողովրդավարացման մակարդակի մասին: Կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու գործում մեծ է կուսակցությունների դերը:

Կանանց քաղաքական մասնակցության ակ-

տիվացման համար կարևոր նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են կուսակցության բարոյա-արժեքային համակարգում գենդերային հիմնախնդիրների ներառման աստիճանը, կուսակցական ավանդույթները և կուսակցությունում գենդերային հավասարության գաղափարների առաջնորդման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, կուսակցության առաջնորդների՝ գենդերային հավասարությանը նպաստող քաղաքական վարքագիծը, կանանց տեսակարար կշիռը կուսակցությունների կազմում և նախընտրական

ցուցակներում, կուսակցության ղեկավար մարմինների գեներալային կազմը, քաղաքական որոշումների ընդունման գործընթացին կանանց մասնակցության հնարավորությունները, կուսակցությունում իրական ազդեցություն ունենալու և իշխանության աստիճանը:

...Կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը ժողովրդավարության հիմնարար չափորոշիչ է, որ պետք է հարստացվի քաղաքական, հասարակական և մասնագիտական կյանքում հավասարակշռված գեներալային ներկայացուցչության շնորհիվ:

Կանանց և տղամարդկանց միջև հավասարության հարցերի նախարարների 5-րդ տրոյակական համաժողով, Սկոպիե, 2003 թ.

Կուսակցությունները, ըստ գեներալային կազմի, ավելի ստույգ՝ կանանց ներկայացվածության, կարելի է դասակարգել երեք խմբի:

Առաջին խմբում՝ 30%-ից ցածր, հայտնվել են Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ինչպես նաև 4 կուսակցություն, որոնք մտնում են ընդդիմադիր «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ) միության մեջ:

Երկրորդ խմբում, որտեղ կանանց ներկայացվածությունը 30-50% է կազմում, հայտնվել է «Ժառանգություն» կուսակցությունը (45%), ինչպես նաև այն կուսակցությունների մեծ մասը, որոնք մտնում են ՀԱԿ-ի մեջ (միջին ներկայացվածությունը միությունում 46% է):

Երրորդ խմբում (51%) են Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Օրինաց երկիր», «Միավորված հայեր» կուսակցությունները, ինչպես նաև Հայաստանի կանաչների (սոցիալ-էկոլոգիական) կուսակցությունը, որ ՀԱԿ-ի կազմում է:

Քաղաքական կուսակցությունները հիմնականում գեներալայնորեն չեզոք քաղաքանություն

են վարում: Դա դրսևորվում է թե՛ կուսակցական ղեկավարության գեներալային կազմում, թե՛ ծրագրերում և ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակները կազմելիս: Այսպես, 2012 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցած 19 կուսակցությունների ծրագրերի վերլուծությունը ցույց տվեց, որ կուսակցությունների մեծ մասի ծրագրերում չկան դրույթներ՝ նպատակադրված գեներալային հավասարության առաջնորդմանը, կանանց քաղաքական մասնակցության զարգացմանը և կանանց առաջադրմանը իշխանության որոշումների ընդունման մակարդակի մարմիններում:

Դրանցում հիմնականում արտացոլված են սոցիալական խնդիրներ՝ դրույթներ ընտանիքի ամրապնդման, մայրության և մանկության պաշտպանության, կանանց վերարտադրողական դերի մասին:

Հայաստանի հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրում առանձնացված էր «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» սկզբունքը, որը, սակայն, ավելի շատ վերաբերում էր երիտասարդությանը, անպահով ընտանիքներին, սահմանափակ հնարավորություններով մարդկանց, տարբեր համայնքներին: Ծրագրում բացակայում է կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարության հիմնախնդրի առաջադրումը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում նույնպես գեներալային բաղադրիչը բավարար չափով ընդգրկված չէր: Սակայն ծրագրում թվարկված առաջնահերթ խնդիրների շարքում դրույթ կար կանանց մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման մասին: Իսկ ծրագրի «Տեղական ինքնակառավարման զարգացում» բաժնում ուշագրավ դրույթ կար. «...Համայնքներում աստիճանաբար անցում կատարել ավագանիների ընտրական խառը՝ մեծամասնական և համամասնական համակարգի, իսկ հետագայում՝ 100-տոկո-

Օրենսդրական առումով, խտրականությունը՝ որպես այդպիսին, տեսանելի չէ, այսինքն՝ օրենքները հավասար իրավունքներ են տալիս և՛ կանանց, և՛ տղամարդկանց: **Մեր կուսակցությունում էլ խտրականություն չեն նկատել, անձը գնահատվում է իր կատարած աշխատանքով, իր գաղափարներով և ծրագրերով:** Բայց մի ուրիշ բան էլ պիտի անպայման շեշտեն՝ կնոջ մտածելակերպը, և դա ես համարում եմ կանանց քաղաքական մասնակցության ամենալուրջ խոչընդոտը: Հասարակությունում կինը, այսպես ասեմ, կանանց մի խումբ դեռևս պատրաստ չէ օգտվելու հավասար իրավունքներից: Կնոջը փոքր տարիքից դաստիարակում են, որ նա պետք է լինի հնազանդ, հեզ, ընտանիքի մայր, հարմարվող և այլն, և մենք հանկարծ այդ կնոջից պահանջում ենք, որ վստահի իր ուժերին կամ ավելի ակտիվ լինի: **Ես կարծում եմ, որ պետք է առաջին հերթին կնոջ մտածելակերպը փոխել, հետո արդեն՝ հետևանքները:**

Էլինար Վարդանյան
 ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ



ասնոց համամասնական ընտրական համակարգի»։ Անկասկած, այս դրույթի կենսագործումը, կիրառելով գենդերային քվոտայի մեխանիզմը, կարող է նպաստել տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության ընդլայնմանը։

«Հրաշնակցություն կուսակցության նախընտրական ծրագրի սոցիալ-տնտեսական բաժնում ընդգրկված էր դրույթ կանանց զբաղվածության ապահովման մասին. «Թեթև արդյունաբերության զարգացումը կդիտարկվի ներկրվող մի շարք ապրանքների արտադրությունը Հայաստանում կազմակերպելու, զբաղվածություն (հատկապես՝ կանանց շրջանում) ապահովելու... տեսանկյունից»։ Ընդգրկված է նաև կարևոր դրույթ ծննդաբերության արձակուրդում գտնվող կանանց աշխատանքային ստաժի մասին. «Կրնդունվի օրենք, որի համաձայն՝ մինչև երկու տարեկան երեխա խնամող չաշխատող կանանց համար այդ ժամանակահատվածը կհամարվի աշխատանքային ընդհանուր ստաժ»։

Հետաքրքիր դրույթներ են ընդգրկված **«Ժառանգություն» կուսակցության ծրագրում**, որը լրացվել և փոփոխվել է 2008 թ.։ Մայրության, մանկության և ընտանիքի պաշտպանության մասին ավանդական դրույթի կողքին ծրագրում անհանգստություն է արտահայտվում գյուղական ընտանիքների կապակցությամբ, որոնք տղամարդկանց միգրացիայի պատճառով հայտնվել են դժվարին կացության մեջ։ Ծրագրում դրույթ կա բանակի ամրապնդման մասին, որում ասվում է, որ հարկ է կամավորության սկզբունքով բանակում ծառայելու հնարավորություն տալ կանանց և աղջիկներին։ Կուսակցության ծրագրում չկան դրույթներ կանանց քաղաքական մասնակցության մասին, սակայն կանանց ՀԿ-ներում ներգրավելու մասին դրույթը կարող է նպաստել կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը։

Գենդերային հավասարությունն առաջնահերթ չի դիտվում նաև «Օրինաց երկիր» կուսակցության նախընտրական ծրագրում։ Նախընտրական ծրագրի «Ընտանիքի, մայրության և մանկության խնդիրների լուծմանը՝ առաջնահերթություն» բաժնում զգալի ուշադրություն է դարձվում ընտանիքի պաշտպանությանը, և առաջարկվում են համալիր միջոցառումներ այդ խնդիրը լուծելու համար։

Հայաստանի դեմոկրատական կուսակցության ծրագրում գենդերային մոտեցումը բացակայում է, թեպետ դեռ 1995 թ. կուսակցության նախընտրական ծրագրում առաջին անգամ առաջադրված էր կանանց իշխանության կառույցներում ներգրավելու խնդիրը։

«Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների ընտրական դաշինքի նախընտրական ծրագիրը փաստաթղթերի համալիր է, որում գենդերային մոտեցումը չկա։

Ի տարբերություն մնացած կուսակցությունների՝ **«Միավորված հայեր» կուսակցության ծրագիրը** նախատեսում է «պետական և հասարակական-քաղաքական կառույցներում կնոջ դերի բարձրացում և կարևորագույն գործընթացներում նրա համակողմանի ընդգրկում»։

Ահա քաղաքական կուսակցությունների ծրագրերում կանանց առաջնորդման մեխանիզմների բացակայությունը ցույց է տալիս, որ կուսակցությունների քաղաքականության մեջ գենդերային հավասարության ապահովումն առաջնահերթ ուղղություն չի համարվում։

Հիշեցնենք, որ գենդերային առումով չեզոք օրենքները, ռազմավարությունները և ծրագրերը կարող են ոչ միտումնավոր ամրապնդել անցյալում տեղ գտած խտրականության դրսևորումների հետևանքները։ Կարելի ասել, որ եթե «կարծրատիպային պատկերացումների, մոտեցումների և մոդելների» առկայության պատճառով կանանց չի հաջողվում մրցակցել կուսակցություններում տղամարդկանց հետ, գոյություն ունի անուղղակի խտրականություն, և կուսակցությունները պարտավոր են նման ռազմավարություններով և ծրագրերով նպաստել այնպիսի օրենքների ընդունմանը, որոնք ուղղված են հնարավորությունների հավասարության ապահովմանը։

Թեև կուսակցությունների ծրագրերի վերլուծությունը վեր հանեց դրանց գենդերայնորեն չեզոք նկարագիրը, որոշ դրական փոփոխություններ, այնուամենայնիվ, կուսակցությունների քաղաքական գործելակերպում նկատվում են, հատկապես՝ կուսակցությունների ղեկավարների հրապարակային ելույթներում, որոնցում հնչում է կանանց քաղաքական ակտիվացման թեման։ Կուսակցությունների ղեկավարները և պետական մակարդակի քաղաքական գործիչներն իրենց ելույթներում երբեմն հիշատակում են քաղաքականության մեջ կանանց լայնորեն ներգրավելու անհրաժեշտության մասին։ Թեպետ շատ դանդաղ, բայց կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը սկսում է երևալ նրանց ելույթների թեմաներում՝ այդպիսով նախադրյալներ ստեղծելով այդ հիմնախնդիրների նկատմամբ քաղաքական կուսակցությունների առավել լուրջ մոտեցման համար։

ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում քաղաքական կուսակցությունների ցուցակների կազմման մեխանիզմների ուսումնասիրությունը վկայում է ներկուսակցական ժողովրդավարության ճեղքվածքի մասին։ Ինչպես և նախորդ տարիներին, կուսակցությունների շարքային անդամները, որպես կանոն, ընտրական ցուցակների

կազմմանը չեն մասնակցում և տեղյակ չեն, թե ինչ սկզբունքով են կազմվում դրանց: Անգամ ցուցակում ընդգրկված թեկնածուներն առանձնապես տեղյակ չեն դրանց կազմման մոտեցումների մասին, և հաճախ անհայտ է մնում, թե ինչ սկզբունքով է կուսակցության անդամին վերապահվել այս կամ այն տեղը, լինի նա կին թե տղամարդ:

Հայաստանի որևէ կուսակցություն նախաձեռնություն չի ցուցաբերել և կամավոր կուսակցական կառույցներում կանանց թիվը մեծացնելու մեխանիզմներ չի գործադրել, հատուկ միջոցներ չի ձեռնարկել, օրինակ՝ ներկուսակցական քվտաներ: Կուսակցական ցուցակներում կանանց ընդգրկելու հարցում որոշակի դեր է խաղացել ՀՀ ընտրական օրենսգրքում 20-տոկոսանոց գենդերային քվտան: Սակայն 2012 թ. ընտրությունների նորարարությունն այն էր, որ հաճախ կուսակցական ցուցակների թեկնածուներին առաջարկվում էր միանգամից գրել երկու դիմում, մեկը ցուցակում ընդգրկվելու համաձայնության մասին, մյուսը՝ պատգամավորական մանդատից հրաժարվելու:

Կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնները շատ են. կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման ազգային մեխանիզմի բացակայություն, օրենսդրական հիմքերի անբավարարություն, կանանց առաջ մղելու հարցում կուսակցությունների շահագրգռության ձևավորման իրավական մեխանիզմների բացակայություն: Կանանց քաղաքական մասնակցությանը չեն նպաստում քաղաքական պայքարի դաժան և օլիգարխիկ բնույթը, մրցակցության մեջ կանանց և տղամարդկանց անհավասար հնարավորությունները, հասարակությունում տղամարդկանց և կանանց վարքագծի

տարբեր մոդելների արմատավորումը, քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց նկատմամբ երկակի չափորոշիչների առկայությունը, հայ իրականության մեջ կին քաղաքական գործիչների՝ որպես դերային մոդելների դրական օրինակների անբավարարությունը: Բացասական գործոններ են նաև հասարակության և իրենց իսկ կանանց կողմից խտրական գործելակերպը չգիտակցելը, կանանց համախմբված հասարակական շարժման բացակայությունը, կանանց քաղաքական մասնակցությանը ՉԼՄ-ների ոչ բավարար աջակցությունը, որոնք հաճախ վերարտադրում են գենդերային կարծրատիպերը, կանանց ցածր ինքնագնահատականը կամ «ինքնախտրականությունը»:

«...Հասարակությունը ժողովրդավարացվում է, բայց կարծրատիպերն ավելի ու ավելի ամրանում են: Հատկապես մերժողական վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցության առնչությամբ ոչ թե միջին կամ ստորին խավում է արտահայտվում, այլ հենց վերին խավում: Այն մարդիկ, որոնք ակտիվ մասնակցում են քննարկումներին, ակտիվ ստորագրում են միջազգային պարտավորություններ, այդ նույն մարդիկ կարող են իրենց անձնական կարծիքը ներկայացնել, թե կնոջ տեղն ամեն դեպքում քաղաքականությունից դուրս է»:

Ելենա Վարդանյան
ՀՀ նախագահին կից Հանրային խորհրդի ժողովրդագրության և գենդերային հարցերի հանձնաժողովի նախագահ

Այսպիսով, թեպետ Հայաստանի պետական գենդերային քաղաքականության մեջ դրական փոփոխություններ են նկատվել, կուսակցությունների քաղաքականությունը, որպես կանոն, շարունակում է գենդերայնորեն չեզոք մնալ և կանանց քաղաքական մասնակցության մեծացման խնդիրը դեռևս կուսակցությունների քաղաքական օրակարգում բացակայում է:

Հազարամյակի զարգացման նպատակների տեղայնացումը և առաջընթացը Հայաստանում, Ազգային զեկույց 2005

Հազարամյակի զարգացման նպատակների ազգային շրջանակի ցուցանիշների նպատակային արժեքները

Նպատակ 3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍՏՈՒԹՅԱՆ ՕԺԱՂԱՎՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՈՒՄ

<i>Թիրախ 4. Մինչև 2015 թվականը բարձրացնել երկրի քաղաքական կյանքին կանանց մասնակցության աստիճանը</i>		
12	Կանանց տեսակարար կշիռը ԱԺ պատգամավորների, նախարարների, մարզպետների և փոխնախարարների ընդհանուր թվաքանակում	25% -ից ավելի
13	Կանանց տեսակարար կշիռը համայնքների ղեկավարների ընդհանուր թվաքանակում	10%-ից ավելի
14	Գործազուրկ կանանց մասնաբաժինը գործազուրկների ընդհանուր թվաքանակում	առնվազն 50%





ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆԸ

Գայանե Արմաղանովա

*Համալսարանական կրթությամբ կանանց
ասոցիացիայի փոխնախագահ,
Հայաստանի առողջապահության
աշխատողների արհեստակցական
կազմակերպությունների հանրապետական
միության նախագահ*

Կանանց հասարակական կազմակերպությունները՝ որպես քաղաքացիական հասարակության կառույցներ, ավելի ու ավելի մեծ դեր են խաղում Հայաստանի ժողովրդավարական գործընթացներում:

Վերջին 5 տարվա ընթացքում հանրապետությունում երևան են եկել ավելի քան 1000 նոր հասարակական կազմակերպություններ:

ՀԿ-ների թվի աճը կազմել է 143%: Ընդ որում, կանանց ՀԿ-ների թիվը նույն ժամանակաշրջանում 76-ից հասել է 250-ի, այսինքն՝ աճել է ավելի քան 3 անգամ: Եթե 2007 թ. կանանց կազմակերպությունները կազմել են բոլոր ՀԿ-ների 2,8%-ը, ապա 2012 թ. արդեն՝ 6,5%-ը:

Այսուհանդերձ, բնակչության զբաղվածության վիճակագրության վերլուծությունը՝ հիմնված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ուսումնասիրության վրա, բացահայտեց, որ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց զբաղվածությունը հասարակական հատվածում նվազման միտում ունի, ընդ որում՝ հանրապետության քաղաքների զբաղվածների հաշվին:

ՀԿ-ներում զբաղվածների տվյալների գենդերային վերլուծությունը ցույց է տալիս, որ զբաղվածության ընդհանուր նվազման խորապատկերում կանանց զբաղվածության նվազման տեմպերն ավելի մեծ են, քան տղամարդկանց զբաղվածությանը: Այսպես, եթե 2009 թ. ՀԿ-ներում բոլոր զբաղվածների թվում կանայք կազմել են 1%, իսկ զբաղված տղամարդիկ՝ 0,9%, ապա 2010 թ. կանանց զբաղվածությունը ՀԿ-ներում նվազել է մինչև 0,4%, իսկ տղամարդկանց շրջանում՝ մինչև 0,5%:

Հասարակական հատվածում զբաղվածության գենդերային հարաբերակցությունը փոխվում է հոգուտ տղամարդկանց: Եթե 2009 թ. տղամարդիկ և կանայք հասարակական հատվածում ներկայացված են եղել գրեթե հավասար հարաբերակցությամբ, ապա 2011 թ. տղամարդիկ կազմել են արդեն ՀԿ-ներում զբաղվածների 66%-ը:

կայացված են եղել գրեթե հավասար հարաբերակցությամբ, ապա 2011 թ. տղամարդիկ կազմել են արդեն ՀԿ-ներում զբաղվածների 66%-ը:

Վերլուծելով վերը բերված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ չնայած հասարակական կազմակերպությունների թվական աճին, այդ թվում և կանանց, այդ կազմակերպություններում զբաղվածության ցուցանիշների նվազումը վկայում է դրանց ակտիվության որոշ անկման և ֆինանսական անկայունության մասին:

...Կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը կարող է ապահովված լինել միայն սեռերի հավասարության բնագավառում կոնկրետ քաղաքականության զուգահեռ և փոխարացնող ռազմավարությունների օգտագործման և նպատակաուղղված գենդերային աշխատանքների շնորհիվ:

Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 5-րդ եվրոպական համաժողով, Սկոպիե, 2003 թ.

Չնայած ներգրավվածության ցածր մակարդակին՝ կանանց հասարակական կազմակերպություններն ավելի ու ավելի նշանակալի դեր են խաղում Հայաստանի քաղաքացիական հասարակության ձևավորման խնդրում: Ընդլայնվում են հասարակական կազմակերպությունների գործունեության ոլորտները, և թեպետ ոչ բոլոր կանանց կազմակերպություններն են, որ առաջնահերթություն են դիտում քաղաքականության մեջ կանանց անմիջականորեն առաջ մղելու խնդիրը, միևնույն է, կատարելով բազմաթիվ գործառույթներ տարբեր ոլորտներում՝ նրանք ավելի ու ավելի շոշափելի ազդեցություն են թողնում իշխանությունների գործողությունների, անհրաժեշտ նորմատիվ ակտերի ընդունման, արդյունավետ սոցիալական քաղաքականության ձևավորման ու իրականացման վրա:

Նկատելիորեն բարձրացել է գործող ՀԿ-ների պրոֆեսիոնալիզմը, և ամրապնդվում է նրանց

համագործակցությունը պետական կառույցների հետ: Նախարարություններում, հատկապես՝ սոցիալական ոլորտում գործող, ինչպիսիք են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունները, սերտ գործընկերային



հարաբերություններ են հաստատվել այդ ոլորտներում գործող հասարակական կազմակերպությունների հետ, որոնք հրավիրվում են մասնակցելու ընդունվող ծրագրերի ու նորմատիվ փաստաթղթերի մշակմանն ու քննարկմանը, դրանց իրականացման գնահատմանը:

Հայաստանի հասարակական հատվածի զարգացման ցայտուն միտումը վերջին 5 տարիներին նրա համախմբումն է: Համաձայն «CIVITAS Քաղաքացիական հասարակության համաթիվ» հետազոտության արդյունքների՝ ներհատվածային համագործակցության և տեղեկատվության փոխանակման զարգացումը նշանակալի մակարդակի է հասել: Միայն հետազոտությանը նախորդած 3 ամսվա ընթացքում հարցված կազմակերպությունների 71%-ը հանդիպումներ է ունեցել նմանատիպ հարցերով զբաղվող ուրիշ կազմակերպությունների հետ, իսկ 64%-ը տեղեկատվություն է փոխանակել:

2009-ից ակտիվացել է դեռևս 2000 թ. հանրապետության վարչապետին առընթեր ստեղծված Կանանց խորհրդի գործունեությունը, որը որոշակի ավանդ ունի 2010 թ. կառավարության կողմից Գենդերային քաղաքականության հայեցակարգը և Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրն ընդունվելու հարցում:

ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը:

Հասարակական կազմակերպությունները մեծ դեր են խաղում կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման խնդրում: Հասարակական շարժման լիդերների կարծիքով՝ հենց հասարակական հատվածն է կանանց սկզբնական քաղաքական սոցիալականացման հիմնական ինստիտուտը: Հասարակական կազմակերպությունների գործունեությունը կանանց ներուժի զարգացման, քաղաքացիական դիրքորոշման ձևավորման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ուղղությամբ նպաստում է կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը և հասարակության մեջ գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը: Չարգացող համագործակցությունն օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների հետ նպաստում է հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպման գործնական հմտությունների ձեռքբերմանը, լիդերական որակների ձևավորմանը:

Հասարակական շարժման լիդերների գնահատմամբ, կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը 2012 թ. ընտրություններ

Կանանց ՀԿ-ներն ամեն կերպ նպաստում են կանանց առաջնորդմանը, որպեսզի նրանք ոչ միայն առաջադրվեն, այլև ընտրվեն: Ես համարում եմ, որ այստեղ աջակցությունը էական է, և այն պետք է լինի, դա անհրաժեշտ է, քանի որ կին թեկնածուների և կանանց կազմակերպությունների ռազմավարական նպատակները պետք է համընկնեն: Բայց եթե մենք ցանկանում ենք ունենալ կանանց լուրջ ներկայացվածություն խորհրդարանում, դա ենթադրում է նաև կանանց կազմակերպությունների զորակցություն, որպեսզի հետո պահանջեն կին պատգամավորներից: Աջակցության ձևերը կարող են բազմազան լինել՝ վստահված անձանց ներկայություն, աշխատանք մեծամասնական ընտրակարգով առաջադրված կին թեկնածուների տեղական շտաբներում և այլն:

*Նատալյա Մարտիրոսյան
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
հայաստանյան կոմիտեի համանախագահ*



րի ընթացքում 2007 թ., ընտրությունների համեմատությամբ, որոշ անկում է ապրել: Նրանց կարծիքով՝ ակնհայտ է հասարակության ընդհանուր ապատիան՝ կապված քաղաքական

Կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ու վերջիններիս կանանց խորհուրդների համագործակցության զարգացման շարունակական սիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվել են այդ կառույցների և քաղաքացիական հասարակության փոխազդեցության ձևերն ու ոլորտները: Կանանց ՀԿ-ները բազմաթիվ հանդիպումներ են նախաձեռնում, համատեղ սեմինարներ, կլոր սեղաններ, համաժողովներ, որոնք նպաստում



ընտրական գործընթացի հետ, որը տարածվում է նաև նրա կանանց հատվածի վրա:

Հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցությանը վերջին 5 տարվա ընթացքում փոխվել է դեպի դրա դրական ընկալումը: «Հասարակությունն ավելի բարյացակամ է տրամադրված կանանց նկատմամբ», «ՀՀ Ազգային ժողովի նիստերում, քաղաքական կուսակցությունների միջոցառումներում կանանց տեսնելն ու լսելը սովորական է դարձել», «Քաղաքացիներն այլևս այդ փաստին կլորացած աչքերով չեն նայում, ընդհակառակը՝ ինչոր չափով հպարտանում են, որ կանայք այս կամ այն ոլորտում հաջողությունների են հասնում»:

Ակնհայտ են նաև փոփոխությունները երիտասարդական միջավայրում: Երիտասարդ աղջիկները տարեցտարի ավելի ու ավելի ակտիվ են դառնում, ինչը բնականոն է ընկալվում երիտասարդ տղամարդկանց կողմից, աստիճանաբար կոտրվում են հասարակության մեջ կանանց դերի կարծրատիպային պատկերացումները:

Հասարակության՝ կանանց քաղաքական մասնակցության ընկալման վրա դրական ազդեցություն է ունեցել, անկասկած, վերջին 5 տարիների ընթացքում կին պատգամավորների ակտիվությունը:

Այսուհանդերձ, կարծիք կա, որ հասարակության առանձին շերտերում դեռևս պահպանվում է կարծրատիպային վերաբերմունքը կանանց դերին քաղաքականության մեջ և կանանց քաղաքացիական ու քաղաքական մասնակցությանը:

են կապերի հաստատմանը, տեղեկությունների փոխանակմանը, տարբեր հիմնախնդիրների և դրանց լուծման ճանապարհների որոնմանը:

Հասարակական կազմակերպությունները խոր ըմբռնում են ցուցաբերում և գիտակցում են այդ կառույցների միջև համագործակցության դերը քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարական գործընթացների զարգացման խնդրում: Հետզհետե ավելի հաճախ են քաղաքական կուսակցությունների կանայք ընդգրկվում արդի հիմնախնդիրների համատեղ քննարկումներում, մասնավորապես՝ օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված նախաձեռնությունների քննարկումներում:

Ես հետադարձ հայացք եմ գցում, ու ակնհայտ է, որ գոնե վերջին 15 տարում մեծ առաջընթաց կա Հայաստանի ներքաղաքական ու հասարակական կյանքում: Եթե նախկինում քաղաքականության մեջ կինն ընկալվում էր օգնականի կամ խորհրդականի դերում, ապա այսօր առաջին շարքերում ու կարևոր պաշտոններում է:

Նաիրա Կարապետյան
ՀՀ Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ

ՀԿ-ների լիդերների գնահատմամբ՝ նման միջոցառումներն ուսանելի են եղել քաղաքական կուսակցությունների կանանց համար, նրանք սկսում են գիտակցել, որ հսկայական տեղեկատվություն կարող են ստանալ ՀԿ-ներից. վիճակագրական տվյալներ, ՀԿ-ների անցկացրած հետազոտություններ, դեպքեր, այսինքն՝ այն ամենը, ինչ իրենք չունեն, և ինչի համար ռեսուրսներ ու հնարավորություններ չունեն:

ԿԱՆԱՅՔ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅԱՄԱԿԱՐԳՈՒՄ



Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիան 2012 թ. օգոստոսից իրականացնում է «Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում» ծրագիրը, որի նպատակն է կանանց՝ տեղական ինքնակառավարման համակարգում արդյունավետ մասնակցելու հնարավորությունների ընդլայնումը նրանց կողմից քաղաքական և իրավական գիտելիքների յուրացման, լիզերի որակների ձևավորման, կազմակերպչական կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, ընտրությունների ընթացքում կանանց կուտակած դրական փորձի կիրառումը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեջ:

Ծրագիրն իրականացվում է «Հայաստանում հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանում. կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագրի շրջանակներում Միավորված Ազգերի Չարգացման ծրագրի կողմից, Եվրամիության ֆինանսավորմամբ: Ասոցիացիան ծրագիրն իրականացնում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի և Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի հետ համատեղ:

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՈՒՄԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼ

Գայանե Մերոյան

«Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում» ծրագրի համակարգող



Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումն սկսվել է 1995 թ. ՀՀ Սահմանադրությունն ընդունելուց հետո: Տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրություններն անցկացվել են 1996 թ. նոյեմբերի 10-ին, և 2011 թ. այդ օրը ներառվել է Հայաստանի տոնական օրերի շարքը՝ որպես Տեղական ինքնակառավարման օր:

Եվրոպական երկրներում դեռևս անցյալ դարի 80-ական թթ. է հաստատվել այն գաղափարը, որ իրապես ժողովրդավարական պետությունն իր հիմնական խնդիրները կարող է լուծել միայն տեղական ինքնակառավարման զարգացած համակարգի առկայության դեպքում: 1985 թ. Եվրոպայի խորհուրդն ընդունել է Տեղական ինքնա-

կառավարման եվրոպական խարտիան, որը տեղական ինքնակառավարման մարմինների գործառնության հիմնարար սկզբունքներն ամրագրող և այդ համակարգի զարգացման ուղիները սահմանող փաստաթուղթ է:

Հայաստանի Հանրապետությունը, 2002 թ. վավերացնելով խարտիան, հավաստել է իր կողմնակցությունն այն գաղափարներին, որ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական կառույցի հիմքերից մեկն են, և քաղաքացիների՝ պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը կարող է անմիջականորեն իրականացվել հատկապես տեղական ինքնակառավարման մակարդակով:

2012 թ. սեպտեմբերին 812 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների



հերթական ընտրությունները նշանակալի էին այն տեսանկյունից, որ անցկացվում էին ընտրական կարևոր գործընթացների ժամանակահատվածում, որոնք սկսվել էին նույն տարվա մայիսին կայացած Ազգային ժողովի ընտրություններով և ավարտվել 2013 թ. փետրվարի 18-ին նախագահական ընտրություններով:

ծրագրի աջակցությամբ իրականացվող «Հաստատում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում 2012 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում անցկացրեց սեմինարներ, որոնց մասնակցեց ավելի քան 200 կին, այդ թվում՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ և նրանց ընտրական թիմերի անդամներ:



Սեմինարների ընթացքում մասնակիցները ոչ միայն գիտելիքներ ստացան տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ընտրությունների օրենսդրական հիմքերի, կանանց քաղաքական մասնակցության առանձնահատկությունների

Այդ ժամանակահատվածում առանձնակի արդիականություն ստացավ կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման հիմնախնդիրը, հատկապես՝ խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նրանց ակտիվ մասնակցության խնդիրը:

վերաբերյալ, այլև ձեռք բերեցին որոշ կարողություններ ու հմտություններ նախընտրական քարոզարշավն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար:

Չարգացած ժողովրդավարությամբ երկրների փորձը հաստատում է այն իրողությունը, որ քաղաքական գործընթացներին կանանց մասնակցությունը, ըստ էության, ոչ թե սոսկ կնոջ մարդու իրավունքների, կանանց վիճակի բարելավման և պետական ծրագրերում նրանց շահերի ներառման խնդիր է, այլև որակյալ կառավարման, կայուն զարգացման ապահովման, ժողովրդավարության ամրապնդման խնդիր:

Սեմինարներին մասնակցած 123 կանանցից, որոնք համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու էին առաջադրվել, 80-ը կամ 65%-ն ընտրվեցին:

... տեղական ինքնակառավարման պաշտպանությունն ու ամրապնդումն իրենցից ներկայացնում են նշանակալից ներդրում ժողովրդավարական սկզբունքների և ապակենտրոնացված իշխանության վրա հիմնված Եվրոպայի կառուցման գործում:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա

Գիտակցելով կանանց քաղաքական ակտիվության խթանման կարևորությունը, հատկապես՝ նախընտրական շրջանում, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, ինչպես և այլ հասարակական կազմակերպություններ, նախաձեռնեց ընտրություններում արդյունավետ մասնակցությանը կանանց նախապատրաստելուն ուղղված դասընթացներ: Այս խնդիրը կարևորեցին նաև մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնց աջակցությամբ հնարավոր դարձավ ընդլայնել անցկացվող դասընթացների աշխարհագրությունը և ընդգրկել ավելի մեծ թվով կանանց:

Սակայն ընտրությունների ընդհանուր արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ավագանիների կազմում որոշ դրական տեղաշարժ է նկատվում, կանանց ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում դեռևս չի կարելի բավարար համարել:

Ասոցիացիան Եվրամիության ֆինանսավորմամբ և Միավորված Ազգերի Չարգացման

638 համայնքների ղեկավարի ընտրություններում առաջադրված 1237 թեկնածուներից միայն 43-ը կամ 3,5%-ն էին կին: Քաղաքային համայնքներում դարձյալ ոչ մի կին քաղաքապետ չի ընտրվել, իսկ գյուղական համայնքի ղեկավար է ընտրվել ընդամենը 10 կին, որը կազմում է համայնքների ընտրված ղեկավարների 1,6%-ը: Նախորդ ընտրությունների համեմատ՝

կին գյուղապետների թիվը գրեթե երկու անգամ կրճատվել է: Մինչդեռ «Հազարամյակի զարգացման նպատակներ» ծրագրի շրջանակում Հայաստանը պարտավորվել է մինչև 2015 թվականը կանանց տեսակարար կշիռը համայնքների ղեկավարների ընդհանուր թվում հասցնել 10%-ի:

Ավագանու անդամ առաջադրված 6698 թեկնածուներից կանայք էին 580-ը կամ մոտ 9%-ը: Առաջադրված կանանցից 396-ը կամ 68,3%-ը, այսինքն՝ առաջադրված երեք կանանցից երկուսն ընտրվել են:

Ընտրված ավագանու անդամների ընդհանուր թվում կանայք կազմել են 8,4%, որը գրեթե 2 տոկոսով ավելի է նախորդ ընտրությունների համեմատությամբ:

Մասնակից պետությունները պետք է ապահովեն տեղական իշխանության գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

Տեղական իշխանության գործերին մասնակցելու իրավունքը նշանակում է տեղական իշխանության լիազորությունների և պարտավորությունների իրականացման ձևերը փնտրելու, որոշելու կամ դրանց վրա ազդելու իրավունքը:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը «Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին», հոդված 1

Տեղական ինքնակառավարման մարմիններում առաջադրվածների և ընտրվածների կազմում կանանց ներկայացվածության համեմատական վերլուծությունը՝ ըստ մարզերի, ցույց է տալիս, որ կանանց քաղաքական մասնակցությունն առավել բարձր է Սյունիքի մարզում. հանրապետությունում համայնքի ղեկավար առաջադրված 43 կանանցից 13-ը և ավագանու անդամ առաջադրված 580 կանանցից 120-ն այս մարզից են: Ընտրությունների արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը ևս Սյունիքի մարզում է. կանայք կազմում են մարզի համայնքի ղեկավարների 3,7%-ը և ավագանու անդամների 17,4%-ն: Ավագանիների կազմում կանանց ներկայացվածությունը միջին հանրապետական ցուցանիշից բարձր է նաև Լոռու (12,5%), Տավուշի (9,3%) և Արմավիրի (8,7%) մարզերում:

Հարկ է նշել, որ 2012 թ. գրեթե բոլոր մարզերում կանանց մասնակցությունն ավագանու անդամի ընտրություններին, նախորդ՝ 2008 թ. ընտրությունների համեմատ, աճել

է, ընդ որում Արմավիրի մարզում առաջադրված կանանց թիվը գրեթե քառապատկվել է, Արագածոտնի մարզում՝ ավելի քան կրկնապատկվել, մոտ երկու անգամ ավելացել է առաջադրված կանանց թիվը Սյունիքում: Միայն Գեղարքունիքի մարզում է ավագանու անդամ առաջադրված կանանց թիվը նվազել:

Ուշագրավ է, որ ավագանու անդամի թեկնածու առաջադրված կանանց մեծ մասն ընտրվում է. Վայոց ձորի մարզում ընտրվել է առաջադրված կանանց 50%-ը, Արագածոտնում՝ 58%-ը, Գեղարքունիքում՝ 61%-ը, Արմավիրում՝ 63%-ը, Տավուշում՝ 64%-ը, Կոտայքում՝ 67%-ը, Արարատում՝ 68%-ը, Սյունիքում՝ 72%-ը, Լոռիում՝ 73%-ը և Շիրակում՝ 74%-ը: Այսինքն՝ առնվազն յուրաքանչյուր երկրորդ առաջադրված կինն ընտրվում է: Այս տվյալները հերքում են այն տարածում ստացած մտայնությունը, թե ընտրողները կանանց ձայն չեն տալիս: Նշենք, որ տղամարդկանց շրջանում ավագանու անդամ առաջադրվածների և ընտրվածների հարաբերակցությունը նույնպես ըստ մարզերի տատանվում է 68-74% սահմաններում:

Անցկացված սեմինարների և կլոր սեղանների ընթացքում ծավալված քննարկումները մեկ անգամ ևս հաստատեցին, որ ընտրություններում կանանց ցածր ակտիվության հիմնական պատճառներից մեկը նրանց անվստահությունն է սեփական ուժերի նկատմամբ և ինքնախտրականությունը: Որոշ դեպքեր է խաղում նաև այն հանգամանքը, որ ավագանու ինստիտուտը մեզանում դեռևս լիարժեք չի կայացել: Ոչ միայն բնակչությունը, այլև նույնիսկ ավագանու անդամ առաջադրված կանայք, ինչպես ցույց տվեցին մեր անցկացրած սեմինարներն ու կլոր սեղանները, թերի պատկերացում ունեն տեղական ինքնակառավարման այդ մարմնի լիազորությունների, դերի ու գործառույթների, համայնքի կառավարման և զարգացման գործում ավագանու անդամի

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն իրենց լիազորություններն իրականացնելիս և ընդունված օրենքի սահմաններում միավորվելու տեղական ինքնակառավարման, այլ մարմինների հետ այն խնդիրների կատարման համար, որոնք ընդհանուր շահեր են հետապնդում:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 10



մասնակցության հնարավորությունների ու ձևերի մասին:

Այս տեսանկյունից ընտրությունների նախաշեմին նախաձեռնած դասընթացները խիստ օգտակար և արդյունավետ էին ոչ միայն թեկնածու առաջադրված կանանց ընտրաքաղաքական կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաներին, այլև տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին, ավագանու անդամի իրավունքներին ու պարտականություններին, համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեի մշակմանը մասնակցելու և բնակչության հետ աշխատելու ձևերին ծանոթացնելու առումով: Այդ են վկայում նաև սեմինարների ավարտին մասնակիցներին առաջարկված հարցաթերթիկի պատասխանները: Համայնքի ղեկավար և ավագանու անդամ առաջադրված մասնակիցների 82%-ը նշել են, որ սեմինարի արդյունքում իրենց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու

որոշումն ավելի հաստատուն դարձավ, զգալի մասն ընդգծել է, որ սեմինարի ընթացքում ստացած գիտելիքներն ու հմտություններն իրենց ինքնավստահություն ու համարձակություն են հարողել: Միաժամանակ սեմինարների մասնակիցներն ավստասանք էին հայտնում, որ դասընթացները կարճատև էին և անցկացվեցին անմիջականորեն ընտրությունների նախաշեմին:

Անկասկած, նման դասընթացների արդյունավետությունն ավելի բարձր կլիներ, եթե հնարավոր լիներ դրանք ավելի վաղ սկսել, ինչը կնպաստեր նաև կանանց քաղաքական ակտիվության բարձրացմանը և ավելի մեծ թվով կանանց առաջադրմանը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

Այդ նպատակին են միտված 2013 թվականին վերոնշյալ ծրագրի շրջանակում հանրապետության մարզերում նախատեսված երկօրյա սեմինարները և կանանց լիդերության քառօրյա դպրոցները:



ԿԻՆԸ՝ ՂԵԿԱՎԱՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

Ադունիկ Հազրյան

Շիրակի մարզի Արեգնադեն համայնքի ղեկավար

Արդեն 7 տարի է, ինչ աշխատում են որպես Շիրակի մարզի Արեգնադեն համայնքի ղեկավար: Չնայած պաշտոնավարման ընթացքում հանդիպած բազում դժվարություններին՝ նորից առաջադրել են իմ թեկնածությունը և պայքարել են վերընտրվելու համար, քանզի կիսատ գործեր ունեն, նոր ծրագրեր, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը:

Հեշտ չէ կնոջ համար լինել համայնքի ղեկավար, բայց եթե կինը վստահ է իր ուժերին, ունի լիդեր լինելու բնատուր տաղանդ, կարողանում է համատեղել ընտանիքն ու աշխատանքը, կարծում են՝ կառավարելը դառնում է հեշտ ու հաճելի: Թեև հետևում են արդեն յոթ տարիները, ամեն օր աշխատանքի են գնում առաջին օրվա խանդավառությամբ, մի նոր ու համայնքի համար օգտակար գործ կատարելու ակնկալիքով: Ես սիրում եմ իմ աշխատանքը, իմ համայնքը՝ իր բոլոր

խնդիրներով հանդերձ, բնակիչներին՝ իրենց տարօրինակություններով ու պահանջներով:

Հայ տղամարդիկ չեն համակերպվում այն մտքի հետ, որ կինը կարող է զբաղվել քաղաքականությամբ, սա այն հիմնական խնդիրներից մեկն է, որ խանգարում է կնոջ մասնակցությանը տեղական ինքնակառավարման ընտրություններում: Ֆինանսական կախվածությունն ուժեղ սեռից, պարտության վախը նույնպես կաշկանդում են կնոջը և մվագեցնում նրա ակտիվությունը: Արդեն երկար տարիներ է, ինչ իմ ականջին են հասնում շշուկներ, թե կինն ստեղծված է ընտանիքի, խոհանոցի համար, սակայն ես միշտ էլ համոզված եմ եղել, որ հենց այդ տղամարդիկ թաքուն հպարտանում են իրենց կին համայնքապետով ու նորից պատրաստ են սատարելու այդ կնոջը՝ երրորդ անգամ վերընտրվելու համար:

Հայ կինն այսօր արդեն քաղաքականապես հասուն է, և ժամանակն է, որ մասնակցության բարձր ցուցանիշ ունենա քաղաքականության մեջ: Պետք է կոտրել բոլոր կարծրատիպերը, թոթափել վախն ու շահագրգիռ կերպով մասնակցել քաղաքական կյանքին, ապրել վաղվա պայծառ օրը սեփական ձեռքերով կերտելու համոզմունքով:

Հայաստանի համարյա բոլոր մարզերի տղամարդկանց մեծ մասը տարվա յոթ-ութ ամիսներն անցկացնում են արտերկրում՝ տան, մաս համայնքի ամենօրյա հոգսերը թողնելով կնոջ ուսերին: Սրանից հետևություն, որ կամա թե ակամա կինը դառնում է որոշիչ ուժ բոլոր բնագավառներում, ուստի վատ չեր լինի, որ կա-

նայք ավելի բարձր մասնակցություն ունենային կառավարման ոլորտում:

Ես մայր եմ, ունեմ երեք երեխա, որոնք ամեն օր սիրով սպասել են իրենց ուշացող մայրիկին, երբեք չեն տրտնջացել, միշտ սիրով ու հոգատարությամբ են շրջապատել հոգնած, բայց երբեք չհուսահատվող մայրիկին և ուրախ կլինեն, որ նա նորից վերընտրվի:

Եղել եմ Շիրակի մարզի առաջին կին գյուղապետը և այսօր ուրախ եմ, որ մեծացել է այն համարձակ կանանց թիվը, որոնք իրեց թեկնածությունն են առաջադրել համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ դառնալու համար, ուրախ կլինեն, որ համալրվեն կին քաղաքական գործիչների շարքերը:

ՊԵՏՔ Է ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ԱՌԱՋ ԳՆԱԼ

Ռուզաննա Տոռոզյան

Սյունիքի մարզի Գորիսի ավագանու անդամ, Կանանց զարգացման Գորիսի ռեսուրսային կենտրոնի գործադիր տնօրեն



Աշխատելով 2001-2003 թթ. Գորիսի քաղաքապետարանում՝ հասկացա, թե ինչ խնդիր կա: Մարդիկ անտարբեր էին, թե քաղաքապետարանն ինչպես է աշխատում, ավագանին ինչ որոշումներ է կայացնում, նրանց համար միևնույն էր, երևի չէին վստահում կամ էլ հույս չունեին: Այդ անտարբերությունն ինձ շատ զարմացրեց, որոշեցի մասնակից դառնալ համայնքի կառավարման գործընթացին ու 2003-ին առաջադրվեցի ավագանու անդամի թեկնածու: Ես Գորիս քաղաքի առաջին կին ավագանու անդամն եմ: Համայնքի բնակիչների պասիվությունը, ՏԻՄ-երի նկատմամբ անտարբերությունն ինձ մտածելու տեղիք տվեցին, ու որոշեցի առաջադրվել:

Մինչև 2005 թ. եղել եմ ավագանու անդամ: Ընտրվելուց հետո պետք է հեռանայի քաղաքապետարանից: Այդպես էլ արեցի և անցա աշխատանքի հասարակական սեկտորում: Աշխատել եմ «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունում, Կրթության ազգային ինստիտուտի Սյունիքի մասնաճյուղում:

2009 թ. իմ նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի աջակցությամբ ստեղծեցինք Կանանց զարգացման ռեսուրսային կենտրոնը: Դա հնարավորություն էր, որ կարողանայի իմ շուրջը հավաքել խելացի, բանիմաց կանանց, որոնք պատրաստ են իրենց ուժը ներդնելու և աջակցելու համայնքի զարգացմանը:

Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ և սույն օրենքով երաշխավորված իրավունքն ու համայնքի կարողությունն է:

*«Տեղական ինքնակառավարման մասին»
ՀՀ օրենք, հոդված 3*

Սակայն պետք է նշեն, որ մինչ այդ՝ 2005-ին էլ առաջադրել էի իմ թեկնածությունը, սակայն այդ անգամ չընտրվեցի: Ի՞նչն էր պատճառը:

Երբ առաջին անգամ առաջադրվեցի, ընտրություններից առաջ քարոզարշավ կազմակերպեցի, թաղային, անհատական հանդիպումներ ունեցա, մարդկանց ներկայացա, պատմեցի, թե ինչ ծրագրեր ունեմ, ինչ եմ ուզում անել, երկրորդ անգամ մման հանդիպումներ չկազմակերպեցի՝ մտածելով, որ արդեն ճանաչում եմ ձեռք բերել, իսկ 2005-ին իմ աշխատանքի վերաբերյալ չէի իրազեկել մարդկանց, և նրանց մեծ մասը չգիտեր, որ իրենց հուզող այս կամ այն հարցը լուծվել էր իմ շնորհիվ:



Մեր կազմակերպությունը Կապանի և Մեղրու ռեսուրսային կենտրոնների հետ աջակցել է Սյունիքի և Վայոց ձորի մարզերի 37 թեկնածուների: Մինչ ընտրությունները մենք աշխատել ենք պոտենցիալ ունեցող կանանց հետ, ոգևորել ենք, խորհուրդներ տվել, քաջալերել, որ նրանք մասնակցեն: Այնուհետև քարոզարշավի ժամանակ նրանց համար քաղաքական հոլովակներ ենք պատրաստել, տեղեկատվական բուկլետներ հրապարակել, որպեսզի կարողանանք համայնքի բնակիչներին իրազեկել թեկնածուների մասին:

Այս անգամ իմ քարոզարշավն էլ նախորդների համեմատությամբ շատ լավ կազմակերպվեց: Ես էլ ունեի քաղաքական հոլովակ, որն ինձ շատ օգնեց: Նախորդ ընտրությունների համեմատությամբ՝ իմ ինքնավստահությունն ավելի է բարձրացել, ես ավելի շատ գիտելիքներ ունեմ, փորձս ավելի շատ է, հմտացել եմ: Եթե դու 15 հոգու մեջ միակ կինն ես, պետք է պատրաստված լինես, քանի որ միայն քեզ չես ներկայացնում, մի ամբողջ համայնքի կանանց ես ներկայացնում, և քո սխալը կընկալվի որպես բոլոր կանանց սխալը:

Որպես ավագանու աշխատանքի հաջողութ-

յան գրավական՝ ուզում եմ երկու կարևոր հանգամանք նշել: Նախ՝ կապեր ստեղծել: Բոլոր ոլորտներում պետք է համագործակից որոնես, գտնես և պահպանես: Երկրորդ՝ համայնքի ավագանին չպետք է իր կապը կտրի համայնքի հետ. պետք է ցանկացած հարցի շուրջ հետադարձ կապ պահպանես: Եթե մարդը սիրում է փողոցում գրուցել, այնտեղ գրուցիր, եթե մարդը ցանկանում է հանրային քննարկման մասնակցել, այդպես արա: Բոլոր մեխանիզմներն օգտագործիր, որպեսզի համայնքի բնակիչն իրեն մի մաս գա, տեսնի, որ իր ձայնը տեղ է հասնում:

Առաջիկա տարիներին շարունակելու եմ կազմակերպությունում կանանց նվիրված աշխատանքները: Մեր կազմակերպությունը երկու կարևոր ուղղվածություն ունի: Մեկը գենդերային հավասարությանն ուղղված գործունեությունն է տարածաշրջանում, պետք է կրթենք տարածաշրջանի կանանց: Իսկ որպես ավագանու անդամ՝ մարզկենտրոնի գենդերային խորհրդի հետ կաշխատեմ: Ամենակարևորը տարածաշրջանում զբաղվածության խնդիրն է:

Այս տարիների ընթացքում բազմաթիվ գործազուրկ, սոցիալապես անապահով կանանց ուսուցանել ենք գորգագործություն: 42 կին ներգրավված է հեղունագործության մեջ: Մենք շուկայի խնդիր էլ չունենք, քանի որ համագործակցում ենք մի քանի միջազգային կազմակերպությունների հետ, որոնք այդ ապրանքն արտահանում են արտերկիր:

Այն կանանց, որոնք պոտենցիալ ունեն դառնալու ավագանու անդամ, սակայն վախենում են, չեն համարձակվում կամ ինչ-ինչ արգելքներ չեն հաղթահարել, խորհուրդ կտամ համագործակցել ներկա ավագանիների հետ, մասնակցել նիստերին, քննարկումներին: Այսօր հասարակական սեկտորը շատ ակտիվ է, գոնե հասարակական գործունեություն ծավալեն, և այդ կերպ փորձ ու ակտիվություն ձեռք բերեն: Այդ ամենն արդյունք կտա: Պետք է փորձես քայլ առ քայլ առաջ գնալ: Պետք է զուգահեռ աշխատանք տանես և՛ ընտանիքի անդամների հետ, և՛ քեզ կրթես ու քիչ-քիչ առաջ գնաս: Այդպես ես կարողացա հասնել այն բանին, որ այսօր ավագանու անդամ եմ և հասարակական կազմակերպության ղեկավար:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ



Ժողովրդավարության տեսությունն ու պրակտիկան անընդհատ զարգանում են, և գենդերային հավասարության սկզբունքի իրականացումը դիտվում է որպես քաղաքականությունը և կյանքի որակը բարելավելու նախադրյալ, առաջխաղացում դեպի մարդու իրավունքների պաշտպանության ավելի բարձր աստիճան և սոցիալական արդարություն: Գենդերային հավասարությունը ժողովրդավարության կարևորագույն չափանիշ է, իսկ առաջին քայլը գենդերային հավասարության սկզբունքի ապահովման ճանապարհին դրա անհրաժեշտության գիտակցումն է և ներառումը իրավական փաստաթղթերում և քաղաքական պրակտիկայում: Գենդերային հավասարության սկզբունքն իր արտացոլումը գտել է հանրապետության հիմնական օրենքում: ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականությունը, կախված սեռից..., արգելվում է:

Չեր ուշադրությանն ենք ներկայացնում զբաղվածության և աշխատաշուկայի գենդերային տեսանկյունները, համայնքային և տնտեսական զարգացման իրավական տեսանկյունները, ինչպես նաև կանանց հիմնախնդիրները փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում:

ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ԷԱԿԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՇՎԵԿՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԱ



Հարություն Մարգարյանյան

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացված հետազոտությունները, մասնավորապես ՀՀ-ում համայնքային և տնտեսական զարգացման գենդերային հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրությունները փաստում են, որ ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ առանձին մարզերի կտրվածքով զբաղվածության և աշխատաշուկայի տարբեր հատվածներում էական գենդերային անհաշվեկշռվածություն կա:

Աշխատունակ տարիքի բնակչության կազմում մոտ 53%-ը կանայք են, 47%-ը՝ տղամարդիկ, ընդ որում, տնտեսապես ակտիվ բնակչության թվում 2004 թ. ի վեր կանանց տեսակարար կշիռը շարունակաբար աճում է: Չնայած այդ հանգամանքին՝ զբաղվածների ընդհանուր թվի

գրեթե 55%-ը տղամարդիկ են, իսկ 45%-ը՝ կանայք: Ընդ որում, նշված ընդհանրական անհամամասնությունն առավել ցայտուն է դրսևորվում քաղաքային բնակավայրերում, թեև այս կամ այն չափով առկա է ուսումնասիրված բոլոր մարզերի կտրվածքով, բացառությամբ Վայոց ձորի, որտեղ զբաղվածությունը՝ սեռային կտրվածքով, հավասարաչափ է բաշխված:

Զբաղվածության բոլոր կարգավիճակներում, անկախ զբաղվածության բնույթից, տղամարդկանց թվաքանակն էապես ավելի է կանանց համեմատ, բացառությամբ ընտանիքի չվարձատրվող անդամների, որոնց մեջ գերակշռողը կանայք են (ավելի քան 65%): Սա փաստում է, որ տնային տնտեսություններում տնտեսական գործունեություն իրականացնելիս ան-

հատույց օգնելու գործառույթը հիմնականում ստանձնում են ընտանիքի կին անդամները, հետևաբար նրանք ավելի հաճախ են այդ գործառույթը համատեղում տնային առօրյա գործերի հետ: Եկամտաբեր գրադավաժություն ունեցողների թվում սեռային անհամասնության ամենաբարձր ցուցանիշը գործատուների շրջանում է, որտեղ կանայք ավելի մեծ դժվարությունների են հանդիպում հասարակական կարծրատիպերը կոտրելու և սեփական գործ սկսելու հարցում:

ՀՀ աշխատաշուկայում առկա հորիզոնական խտրականությունը զգալիորեն բացատրելի է սեռերի նախընտրություններով: Օրինակ՝ Չանգեգուրի պղնձամուլիբդենային կոմբինատի բոլոր աշխատողների ավելի քան երեք քառորդը տղամարդիկ են, ինչը պայմանավորված է հենց աշխատանքի բնույթով ու բովանդակությամբ: Միանգամայն այլ հիմքերով է արմատավորված ուղղահայաց խտրականությունը: Նույնիսկ «կանացի» բնագավառներում կանանց միջին աշխատավարձն էապես ցածր է տղամարդկանցից, չնայած կրթական ցենզով կամ մասնագիտական պատրաստվածությամբ ոչ մի էական տարբերություն չի արձանագրվում:

Եկամտների գեոդերային վերլուծությունը վկայում է, որ գործունեության բոլոր տեսակներում, աշխատատեղի բնույթից անկախ, տղամարդկանց վաստակածն էապես ավելին է, քան կանանցը: Ամենացայտուն տարբերություններն արձանագրվել են գյուղատնտեսության, տրանսպորտի, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների ոլորտներում, որոնցում տղամարդիկ կրկնակի անգամ ավելի շատ են վաստակում, քան կանայք: Տարբերակումը համեմատաբար փոքր է վարձու սպասարկմամբ մասնավոր տնային տնտեսություններում: Թվերի լեզվով՝ տղամարդկանց աշխատավարձը (եկամուտը) նույն խմբի կանանց եկամտից միջինը 1,6 անգամ բարձր է տնտեսության ֆորմալ հատվածում և 2,1 անգամ՝ ոչ ֆորմալ հատվածում:

Այստեղ աշխատավարձերի գեոդերային տարբերությունների պատճառը պարզ է. դեկավար պաշտոններում, այնուամենայնիվ, գերակշռողը տղամարդիկ են: Այսպես, իրականացված ուսումնասիրությամբ պարզվեց, որ Հայաստանում աշխատող բժիշկների ընդհանուր թվում (13180 մարդ) 66%-ը կանայք են: Չնայած դրան, հիվանդանոցային հաստատությունների տնօրենների միայն 14%-ն է կին (Երևանում՝ 8%-ը, ՀՀ մարզերում՝ 20%-ը): Ոլորտի կառավարման համակարգում ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչությունների 10 պետերից միայն 3-ն են կին՝ Տավուշում, Արմավիրում և Կոտայքում: Եթե հաշվի առնվի նաև այն փաստը, որ բուժաշխատողների ստորին մակարդակում (բուժքույրեր, սանիտարներ, հիվանդապահներ) գրեթե բոլորը կանայք են, ապա պատկերը լիովին պարզ կդառնա: ՀՀ առողջապահության ոլորտում ձևավորված գեոդերային խտրականությունը, հետևաբար և եկամտունների գեոդերային տարբերակվածությունն անընդունելի չափերով մեծ է:

Ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ ՀՀ առանձին մարզերի կտրվածքով աշխատուժի առաջարկի գծով առկա վիճակագրական տվյալներն էապես տարբերվում են միմյանցից՝ կախված աղբյուրից: Հետևաբար, ցածր է դրանց արժանահավատության մակարդակը: Այսպես, ըստ ՀՀ Ջրադավաժության պետական ծառայության պաշտոնական ցուցանիշի՝ գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմում է 10%, իսկ նույն ծառայության կողմից 2010 թ. իրականացված «Իրական գործազրկության մակարդակը Հայաստանում» հետազոտության արդյունքների համաձայն՝ 27,5%-ը: Այսինքն՝ միևնույն ցուցանիշի գծով քառապատիկ անճշտություն կա: Առանձին մարզերի կտրվածքով անճշտությունը շատ ավելի մեծ է. Արարատի մարզում՝ վեցապատիկ (2,9% և 17,4%), Գեղարքունիքի մարզում՝ յոթնապատիկ (3,1% և 22,5%) և այլն: Հանրապետությունում աշխատանք չունեցողների միայն 2,6%-ն է գրանցված Ջրադավաժության պետական ծառայությունում, Արարատում՝ 4,1%-ը, Գեղարքունիքում՝ 0,9%-ը, Սյունիքում՝ 3,7%-ը, Վայոց ձորում՝ 7,1%-ը, Տավուշում՝ 4,0%-ը:

Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում կանանց բաժինը կազմում է 69,3%, Արարատի մարզում՝ 74,7%, Գեղարքունիքում՝ 65,5%, Սյունիքում՝ 69,8%, Վայոց ձորում՝ 74,8%, Տավուշում՝ 67,1%: Սա բացատրելի է մի շարք հանգամանքներով՝ առկա աշխատուճակ բնակչության թվում տղամարդկանց ավելի փոքր մասնաբաժնով, տղամարդկանց շրջանում արմատացած կարծրատիպերի կայունությամբ, արտագնա աշխատանքների մեկնելու ավելի մեծ հակվածությամբ և այլն:

Գործազրկության հիմնախնդրի գեոդերային տեսանկյունը կարևորվում է հատկապես տարիքի և ամուսնական վիճակի հաշվառմամբ. եթե 15-24 տարիքային խմբի տղաների և աղջիկների համար աշխատանք գտնելու հավանականությունը գրեթե նույնն է, ապա 40-44, 45-49 և 50-54 տարիքային խմբերի կանայք կրկնակի ավելի են ենթակա գործազրկության և, հետևաբար, աղքատության մեջ հայտնվելու ռիսկին: Ընտանեկան հանգամանքներ

րի պատճառով գործազուրկ դարձածների ընդհանուր թվի մեջ 85,4%-ը կանայք են և 14,6%-ը՝ տղամարդիկ, իսկ լրիվ աշխատանքային օրով զբաղված ամուսնացածների թվում միայն 38,8%-ն են կանայք, 61,2%-ը տղամարդիկ են:

Զբաղվածության և աշխատանքի ոլորտում հանրապետության աշխատունակ տղամարդկանց համար առաջացած հիմնախնդիրները հիմնականում կապված են նրանց աշխատանքի բնույթի և բովանդակության հետ: Քանի որ տղամարդիկ ավելի շատ են ընդգրկված, օրինակ, սեզոնային կամ առողջության համար վտանգավոր աշխատանքներում (ճանապարհաշինություն, տրանսպորտ, շինարարություն և այլն), ժամանակավոր կամ սեզոնային աշխատանքների ավարտի պատճառով գործազուրկ դարձածների թվում տղամարդկանց մասնաբաժինը հասնում է 84%-ի, արտադրական խեղանդամություն ձեռք բերածների թվում՝ 95%-ի:

ՀՀ աշխատաշուկայում ձևավորված իրավիճակի գենդերային վերլուծությունից բխում է, որ գոյություն ունի էական տարբերություն աշխատաշուկայի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության և փաստացի իրավիճակի միջև, ընդ որում աշխատաշուկայի իրավիճակը ներկայացնող ոչ բոլոր պարամետրերի գծով և ոչ բոլոր համայնքներում գոյություն ունեն սեռի հատկանիշով տարանջատված վիճակագրական տվյալներ և նյութեր: Մասնավորապես, գենդերային վիճակագրություն չի տարվում աշխատանքի տեղավորվածների կտրվածքով:

Ըստ դիտարկումների, գործազրկության իրական մակարդակը տարբեր մարզերում և թիրախ քաղաքներում կարելի է գնահատել 20-30%-ի սահմաններում, մինչդեռ Զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցված տվյալները մի քանի անգամ ցածր են: Ընդ որում, այդ ցածր ցուցանիշները դրվել են նաև քաղաքների զարգացման քառամյա ծրագրերի հիմքում:

Մարզային և համայնքային կառույցների աշխատողների կողմից իրական գործազրկության մակարդակը չի դիտարկվում որպես կարևորագույն ցուցանիշ զբաղվածության պատկերը տեղերում գնահատելու, ինչպես նաև գենդերային հաշվեկշռվածություն ապահովող համապատասխան

զբաղվածության ծրագրեր և միջոցառումներ իրականացնելու համար: Կանանց և տղամարդկանց իրական գործազրկության մակարդակների միջև որոշակի տարբերություն կա, բայց ոչ այն չափով, ինչպես ներկայացված է Զբաղվածության տարածքային կենտրոնների տվյալներում, ըստ որոնց՝ գրանցված գործազուրկների 60-70%-ը կանայք են: Սա բացատրվում է ոչ միայն այն բանով, որ կանայք տղամարդկանց համեմատ ավելի հեշտությամբ են հաղթահարում գրանցվելու և գործազուրկի կարգավիճակ ստանալու հոգեբանական արգելքները, այլև այն իրողությամբ, որ տղամարդիկ կանանց համեմատ ավելի շատ են մեկնում արտագնա աշխատանքի: Վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակների միջև իրական տարբերությունը, մեր կարծիքով, կարելի է գնահատել 5-10%-ի սահմաններում:

Զբաղվածության և աշխատանքի շուկայի



գենդերային տարբերությունների համահարթումը դժվար կառավարելի գործընթաց է, քանի որ այս ոլորտն ավելի մեծ չափով է ենթակա շուկայական կոնյունկտուրայի տատանումներին: Ընդ որում, յուրաքանչյուր համայնքում այդ գործընթացն ունի յուրահատուկ դրսևորումներ: Այդուհանդերձ, բոլոր համայնքներին բնորոշ է հետևյալը. աշխատաշուկայում թափուր աշխատատեղերի հիմնական մասը պահանջում է տղամարդկանց աշխատուժ, ինչպես, օրինակ՝ շինարարության, ճանապարհաշինության, հանքարդյունաբերության, տրանսպորտի և այլն: Կանանց ավելի քիչ աշխատանքի ընդունելու մյուս պատճառը կարծրատիպերն են, մասնավորապես, ավանդաբար տղամարդն է դիտվում որպես ընտանիք կերակրող: Վերջապես, գործատուները խուսափում են այլ հավասար պայմաններում աշխատանքի ընդունել երիտասարդ կանանց, քանի որ համարում են, որ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամ-



քի արձակուրդը կարող է խաթարել իրենց բիզնեսի բնականոն ընթացքը:

Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջացել կառավարման համակարգի բոլոր՝ համայնքային, մարզային և հանրապետական մակարդակների, վիճակագրական, տեղեկատվական և այլ ծառայությունների, ինչպես նաև զբաղվածությանն ու գործարարությանն աջակցող կազմակերպությունների գործառույթներում արմատավորել սեռի հատկանիշով տարանջատված հավաստի ցուցանիշների համակարգ, որը հիմնված լինի տվյալների հաշվառման և մշակման հստակ մեթոդաբանության վրա:

Մարզերի, հատկապես ոչ մեծ քաղաքների և գյուղական համայնքների անհամաչափ զարգացումը մեղմելու նպատակով հարկ է ապահովել համապատասխան ֆինանսական հոսքերի ուղղորդում ըստ գերակա նշանակություն ունեցող ոլորտների, որի շնորհիվ հնարավոր կլինի նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչն էլ, իր հերթին, կնպաստի զբաղվածության աճին թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց շրջանում:

Հաշվի առնելով, որ կանանց տեսակարար կշիռը զբաղվածների մեջ համեմատաբար ցածր է գրեթե բոլոր տարիքային խմբերում, հատկապես՝ ամուսնացած կանանց շրջանում, անհրաժեշտ է գործազրկության մակարդակի կրճատ-

մանն ուղղված ծրագրերի իրականացման ժամանակ նրանց դիտել որպես նպատակային փորախ խմբեր և նախատեսել աջակցող միջոցառումներ: Միաժամանակ հարկ է մշակել և նպա-

Նկատի ունենալով, որ փորախ մարզերում և քաղաքներում աշխատաշուկայի վիճակի, միջին եկամուտների և դրանց գեներացիան ընդգրկման առումով գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ, համայնքային և տնտեսական զարգացման քաղաքականությունը պետք է ապահովի յուրաքանչյուր մարզի նկատմամբ տարբերակված մոտեցում՝ տարաբնույթ նպատակային ծրագրերում գեներացիան քաղաքիչի ներառմամբ:

տակային միջոցառումներ արտագնա աշխատանքի մեկնող տղամարդկանց աշխատուժեր կրում գործադրելու ուղղությամբ: Նշված խնդիրները վերաբերում են կառավարման բոլոր մակարդակներին և օղակներին:

Զբաղվածության և աշխատաշուկայի դերակատարումն առավել գործնական դարձնելու, ինչպես նաև ֆորումի յուրաքանչյուր անդամի մասնակցությունն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել, նախևառաջ, ուսումնասիրել արդեն իսկ կուտակված փորձը և դրա հիման վրա մշակել դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված երաշխավորություններ:



**ԿԱՆԱՅՔ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.
ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Գարիկ Միրոյան
տնտեսագիտության թեկնածու

ՀՀ-ում շուկայական համակարգի կայացման և սոցիալական հիմնախնդիրների լուծման արդյունավետ ուղի է տնտեսության մասնավոր հատվածի, *մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՉ) զարգացումը*՝ ըստ զբաղվածության ոլորտում առկա տարածաշրջանային և գեներացիան առանձնահատկությունների: Ներկայումս, չնայած իրականացվող միջոցառումներին, հայ հասարակության մեջ կնոջ նկատմամբ վերաբերմունքը՝ ուղղված

նրանց իրավունքների ամրապնդմանը, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը և գործարար ակտիվության բարձրացմանը, հետ է մնում զարգացման համաշխարհային միտումներից:

ՀՀ կառավարությունը, առաջնահերթ խնդիր համարելով Հայաստանում ՓՄՉ զարգացումն ու դրա պետական աջակցությունը, 2000 թ. ընդունել է «Հայաստանում ՓՄՉ զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթներ» փաստաթուղթը և «ՓՄՉ պետական աջակ-

ցության մասին» ՀՀ օրենքը, որով ամրագրվել են ՓՄՉ ոլորտի զարգացմանն ուղղված պետական աջակցության հիմնական ուղղությունները, ինչը նաև հիմք է հանդիսացել ՓՄՉ տարեկան պետական ծրագրերի մշակման համար: Ըստ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի՝ իրականացված տարաբնույթ միջոցառումների արդյունքում ՓՄՉ ոլորտի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի և զբաղվածների ընդհանուր թվի մեջ աստիճանաբար աճում է:

Միաժամանակ առկա դրական զարգացումները չեն ուղեկցվում ոլորտում գենդերային հաշվեկշռվածության ապահովմանը միտված տեղաշարժերով: *Խոսելով ՓՄՉ ոլորտի գենդերային հիմնախնդիրների մասին՝ պետք է նշել, որ կանանց ձեռնարկատիրական ներգրավվածությունն էսպես ցածր մակարդակում է:*

Թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց գործարար հնարավորությունների ընդլայնման արգելակ է երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անբավարար մակարդակը, ֆինանսավորման, վարկավորման և ներդրումների աջակցության մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև ձեռնարկատիրության ցածր մատչելիությունը, դա խթանող պայմանների բացակայությունը, հարկային և ընդհանուր իրավական դաշտի անկատարությունը՝ կիրարկման առումով:

Համաձայն 2010 թ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից իրականացված «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» հետազոտության արդյունքների՝ Հայաստանում գրանցված է մոտ 500 կին գործատու (գործատուների ընդհանուր թվի 8,3%-ը) տնտեսության ֆորմալ հատվածում, որոնք իրենց գործունեությունը հիմնականում ծավալում են առևտրի և սպասարկման ոլորտում: Մինչդեռ տղամարդ գործատուների թիվը ֆորմալ հատվածում կազմում է շուրջ 5500 մարդ, իսկ ոչ ֆորմալ հատվածում՝ շուրջ 400 մարդ: Այսօր հանրապետությունում ղժվար է որոշել՝ ձեռներեց կանանց հիմնական մասն աշխատում է տնտեսության ֆորմալ, թե՞ ոչ ֆորմալ ոլորտներում: Խոսքը վերաբերում է հատկապես ինքնազբաղվածությանը: Ըստ նույն հետազոտության՝ կանանց շրջանում 130.3 հազ ինքնազբաղվածներից միայն 3,9%-ն է (5.1 հազար) զբաղված ֆորմալ հատվածում, իսկ մնացած 96,1%-ը (125.2 հազար)՝ ոչ ֆորմալ հատվածում:

Հայաստանում կանանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և նրանց շրջանում գործարար ակտիվության աճի ոչ բավարար միտումների մասին են վկայում նաև մի շարք ցուցանիշներ, ինչպես, օրինակ՝ Գենդերային զարգացման ինդեքսի ցուցիչը (Գ-ԶԻ), որը հաշվարկվում է երեք հիմնական կատեգորիաներով՝ կրթություն, տնտեսական ակտիվություն (աշխատանքում ակտիվ մասնակցություն) և կնոջ լիազորությունների ու հնարավորությունների ամրապնդում: Այս երեք ցուցիչների հիմքում ընկած են միջազգայնորեն հասանելի համեմատական տվյալներ, որոնք հաշվարկվում են հարցումների հիման վրա յուրաքանչյուր հինգ տարվա համար և ցույց են տալիս գենդերային խնդիրների շուրջ զարգացումները: Գ-ԶԻ-ն գնահատվում է 0-ից մինչև 100 նիշ սանդղակով: Ցածր նիշը վկայում է գենդերային մեծ անհավասարության մասին, մինչդեռ 100 նիշը ցույց է տալիս, որ գենդերային տարբերություն չկա նշված երեք հիմնական կատեգորիաներում:

Համաձայն մարդկային զարգացման միջազգային կենտրոնի 2012 թ. «Հայ կինը բիզնեսում» որակական ուսումնասիրության՝ վերջին 2009 թ. Գ-ԶԻ-ի արդյունքներով՝ 157 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 98-րդ տեղը: Համապատասխան Գ-ԶԻ ցուցիչներն են՝ կրթությունը՝ 97.1, տնտեսական ակտիվությունը՝ 72.2, կնոջ լիազորությունների և հնարավորությունների ամրապնդումը՝ 4.6: Եվ այս երեք ցուցանիշների միջինացված արժեքը արտացոլում է Հայաստանի Գ-ԶԻ ցուցիչը, որը հավասար է 58-ի և բավական ցածր ցուցանիշ է (հիշեցնենք՝ առավելագույնը 100 միավոր է):

Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը միայն տնտեսական խնդիր չէ և առնչվում է կանանց գործունեությունը քաղաքական դաշտում մեծացնելու հնարավորությունների հետ: Կանանց ձեռնարկատիրության զարգացումը կարևոր ներդրում է հանդիսանում գենդերային խտրականության վերացման, աղքատության և գործազրկության ֆեմինացման մասշտաբների կրճատման գործում:

Հայաստանում գոյություն ունեն կանանց ձեռնարկատիրության ճյուղային կողմնորոշման որոշակի յուրահատկություններ. նրանց կողմից ստեղծված ձեռնարկությունների մեծ մասը գործում է այն ճյուղերում, որոնք ավանդաբար «կանացի» մասնագիտացումներ ունեն՝ թեթև և սննդի արդյունաբերություն, մանրածախ առևտուր, կրթություն, գիտություն, առողջապահություն, ծառայությունների ոլորտ:

Կանանց շրջանում ձեռնարկատիրության զարգացման համար կարևոր դերակատարութ-



յուն կարող են ունենալ ՀՀ-ում ձեռնարկատիրությանը աջակցություն ցույց տվող կազմակերպությունները:

Հայաստանում կանանց ձեռնարկատիրությանը և արհասարակ ձեռնարկատիրությանն աջակցություն ցույց տվող կազմակերպությունները կատարում են ընդհանրական գործառույթներ: Քաղաքականության և ծրագրերի մշակման, տարբեր ծառայությունների մատուցման համար պատասխանատու կառույցներում առկա գեներային անհաշվեկշռվածության պատ-

ճակի բարելավմանը, մասնավորապես՝ կանանց շրջանում հասարակական ակտիվությանը, սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացներին ներգրավվածության բարձրացմանը և ձեռներեցության խթանմանը: Կանանց տնտեսական հզորացման, նրանց շրջանում ձեռներեցության խթանման և բիզնես միջավայրում նրանց միջև փոխհամագործակցության հաստատման առումով հասարակական ոլորտի ակտիվ կազմակերպություններից է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան: Այս կազմակերպության

Ձեռնարկատիրության և ինքնագրավածության ոլորտում գեներային հաշվեկշռվածության ձևավորումը և կանանց մասնակցության ընդլայնումը խոչընդոտող պատճառներ են կանանց գործարարության խթանման համար արտոնյալ պայմանների բացակայությունը, իշխանության մարմինների՝ կանանց ձեռնարկատիրության զարգացման խնդրում ոչ բավարար շահագրգռվածությունը, կոռուպցիայի բարձր մակարդակը և ոչ ֆորմալ հարաբերությունների ձևավորված համակարգը: Կանանց ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտում է նաև առկա ոչ բարենպաստ հասարակական մթնոլորտը, ինչպես նաև հենց իրենց՝ կանանց հոգեբանական խառնվածքը, մասնավորապես՝ նրանց ցածր ինքնագնահատականը:

ճառով մասնավոր հատվածի խթանմանն ուղղված որոշումների կայացման գործընթացում կանայք էական դեր չունեն, իսկ նրանց հուզող հարցերը հաճախ դուրս են մնում պետական և համայնքային կառույցներ-մասնավոր հատված երկխոսության ժամանակ քննարկվող հարցերի շրջանակից: Ուստի փաստացի առկա են կին ձեռնարկատերերի նկատմամբ բացահայտ և թաքնված (լատենտ) խտրականության որոշակի դրսևորումներ:

ջանքերով արդեն ձևավորվել է կին ձեռներեցների ցանց, որում միավորվել են Հայաստանի տարբեր մարզերի գործարար կանայք, գործում է համապատասխան կայք, հիմնադրվել են սոցիալական ձեռնարկություններ, որտեղ ներգրավված են սոցիալապես անապահով կանայք և աղջիկներ:

Կանանց շրջանում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը խթանող ծրագրերի բարձր արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է միավորել տեղական դերակատարների և բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար աշխարհի, հասարակական և միջազգային կազմակերպությունների ջանքերը, այն հաշվով, որ իրականացվող ծրագրերը, պահպանելով գեներային հաշվեկշռվածության սկզբունքը, առավել համապատասխանեն թիրախային խմբերի կարիքներին: Այս առումով կարևորվում է նաև կին գլխավորով ոչ լրիվ ընտանիք ունեցող ինքնագրավածների համար որոշակի արտոնությունների սահմանում, մանավանդ՝ սահմանամերձ բնակավայրերում, որտեղ այս խնդիրն առավել զգալի է:



Սակայն հարկ է նշել, որ ձեռնարկատիրությանն աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների նման պասիվությունը մասամբ փոխհատուցվում է տարբեր հասարակական կազմակերպությունների (Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիա, Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա, մարզերում գործող կանանց ռեսուրսային կենտրոններ և այլն) ակտիվ գործունեությամբ՝ ուղղված իրավի-

ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտող կարևոր պատճառներից է ֆինանսական միջոցների ցածր մատչելիությունը, որն ավելի շոշափելի է հատկապես կանանց դեպքում: Առկա ֆինանսավորման աղբյուրները հիմնականում հասանելի չեն ՓՄՁ սուբյեկտներին, հատ-

կապես՝ սակավ ֆինանսական հնարավորություններ ունեցողներին, որոնց մեծ մասը կանայք են, ինչը բացատրվում է.

- գործարար վարկերի բարձր տոկոսադրույքներով. դրանք 15-24%-ի սահմաններում են՝ առանց սպասարկման համար գանձվող տարատեսակ վճարների, որոնք նույնպես բարձրացնում են վարկի ընդհանուր արժեքը,
- միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությամբ (լավագույն դեպքում վարկերը տրամադրվում են մինչև 18 ամսով),
- տրամադրվող վարկերի փոքր գումարներով (200-5000 ԱՄՆ դոլարի սահմաններում),
- վարկային երաշխիքների համակարգի անկատարությամբ,
- վարկերի դիմաց գրավադրման պայմանների ոչ համարժեքությամբ,
- բիզնես ծրագրերի անբավարար հիմնավորվածությամբ՝ պայմանավորված խորհրդատվական ծառայությունների բացակայությամբ:

Ֆինանսավորման աղբյուրների հետ կապված վերոնշյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մշակել հատուկ ծրագրեր տնտեսավարող սուբյեկտների համար ֆինանսա-

վորման (վարկավորման) աղբյուրները հասանելի դարձնելու և դրանցից նպաստավոր (մատչելի) պայմաններով ֆինանսական միջոցներ ձեռք բերելու ուղղությամբ: Նկատի ունենալով, որ բանկային համակարգում ստեղծված իրավիճակը թույլ չի տալիս մոտ ապագայում ակնկալել առևտրային վարկերի տոկոսադրույքների նվազեցում, հարկ է կոնկրետ քայլեր ձեռնարկել ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման համար այլընտրանքային աղբյուրներ գտնելու կամ տնտեսավարող սուբյեկտներին տոկոսադրույքների մասնակի փոխհատուցման մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ: Մասնավոր հատվածում կանանց ընդգրկվածության ցածր մակարդակը հաշվի առնելով՝ այլ հավասար պայմաններում նախապատվությունը տալ կին գործարարներին:

Վերանայման և հստակեցման կարիք ունեն հարկային և մաքսային գործընթացները, հատկապես հարկային և մաքսային վարչարարության (կարգավորման) ընթացակարգերը և դրանցում հաճախակի կատարվող փոփոխությունները՝ դրանք տնտեսավարող սուբյեկտների համար առավել մատչելի և հասանելի դարձնելու ուղղությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՍԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Արմեն Ներսիսյան

Երևանի Հյուսիսային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, փաստաբան



Պլանային համակարգից շուկայական հարաբերությունների անցումը մեծ իրադարձություն էր հասարակության կյանքում, քանի որ «պետական շահի» կարևորումից անցում կատարվեց «մասնավոր շահի» կարևորմանը: Սույն փոփոխությունը ոչ միայն ձևական, այլև բովանդակային կարևոր նշանակություն ունի, քանի որ պլանային համակարգում հասարակությունը ծառայում էր պետությանը, և արժեզրկվում էին «ժողովրդավարության» և «հումանիզմի» սկզբունքները: Այս անցման հետևանքով պետությունը պարտավորվեց ծառայել հասարակությանը, այսինքն՝ կարևորեց մարդու

իրավունքները, հիմնարար ազատությունները՝ դրանք ճանաչելով բարձրագույն արժեքներ և ձեռնամուխ եղավ դրանց խստագույնս պաշտպանմանը: Բացի նշվածից, կարևորելով տնտեսական ազատ գործունեությունը, տնտեսական առողջ մրցակցությունը, խոսքի ազատությունը, հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը՝ դրանք ամրագրեց սահմանադրության մեջ: **Այդ գործողությունների հիմքով ստեղծեց քաղաքացիական հասարակություն:** Զաղաքացիական հասարակության ձևավորման հիմքով առաջ եկան իրավահարաբերության նոր սուբյեկտներ, օբյեկտներ՝ առա-

ջարկելով իրավահարաբերության նոր բովանդակություն: Պետությունը իրավահարաբերության մասնակիցներին քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու համար իրավահավասար կարգավիճակ և ինքնուրույն ազատ գործելու իրավահնարավորություններ տրամադրեց:

Այսպիսի իրավահնարավորությունների տրամադրումով պետությունը սահմանափակվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Իրավահարաբերության սուբյեկտների ցանկում պետությունը կարևորում է նաև համայնքի մասնակցությունը իրավաշրջանառությանը, քանի որ այդ շրջանառության շնորհիվ ուղղակի կամ անուղղակի տեղի է ունենում մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրինական շահերի իրականացում և պաշտպանություն: Այսինքն՝ իրավաշրջանառություններին համայնքի մասնակցությունն այն կարևոր մեխանիզմներից և մեթոդներից է, որոնց միջոցով իրականացվում է վերը նշված արժեքների արդյունավետ պաշտպանություն:

Սույն հարցի կարևորումով համայնքի իրավասությունների իրականացման համար պետությունը ստեղծել է նաև մի շարք իրավական երաշխիքներ:

Տեղական ինքնակառավարումը իշխանության իրականացման այն ձևն է, որն իրականացվում է համայնքներում:

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է:

Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:

Վերը նշվածից բխում է, որ համայնքը պետք է ակտիվ մասնակցություն ունենա իրավահարաբերություններին, քանի որ համայնքի մասնակցության շահագրգռվածությունը թե՛ նյութական է, թե՛ ծառայողական:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը և դրա զարգացումը, նաև պայմանավորված գենդերային բաղադրիչով, կարևորվում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով:

Սակայն կատարված որոշակի դիտարկումները ցույց տվեցին, որ կան մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ, որոնք խոչընդո-

տում են համայնքներում տեղական ինքնակառավարման պատշաճ և արդյունավետ իրականացումը, նաև ՓՄՁ-ների զարգացումը:

Մասնավորապես՝ լուրջ խնդիր են համայնքներում գույքային ռեսուրսների բացակայությունը և ֆինանսական ռեսուրսների սղությունը: Ոչ պակաս մտահոգիչ է աշխատատեղերի բացակայությունը, քանի որ համայնքի բնակչության մի մասն է աշխատանքով ապահովված, ինչի հետևանքով համայնքների բնակչության մի մասը, որ գործազուրկ է, կամ ցածր է վարձատրվում, մեկնում է արտագնա աշխատանքի կամ միայնակ՝ լքելով ընտանիքը, կամ՝ ընտանիքով, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս ենթադրելու, որ այդ անձինք մեկնում են արտասահման մշտական բնակության: Համայնքներում առկա էական խնդիրներից է գյուղատնտեսությամբ զբաղվողների (ինքնազբաղվածների) թվի նվազումը: Մասնավորապես կրճատվում է անասնապահությունը, հողերի մշակումը, գյուղատնտեսական աշխատանքները դառնում են անարդյունավետ, քանի որ գյուղատնտեսական տեխնիկական ռեսուրսների և ոռոգման ջրի ցանցի խնդիրներ կան, թունաքիմիկատների ձեռքբերումը բնակիչների համար մատչելի չէ: Համայնքներում նաև արտադրված որոշ գյուղմթերքների սպառման խնդիր կա:

Համայնքներում ՓՄՁ-ների զարգացման համար էական խնդիր են անհավասարաչափ վարկային քաղաքականությունը, վարկերի բարձր տոկոսադրույքները և այլն: Այդ հարցում ավելի խոցելի են կանայք, քանի որ վարկային իրավահարաբերությունները հիմնականում ապահովվում են գրավով, և կանանց շատ քիչ տոկոսն է, որ սեփականության իրավունքով գույք ունի և կարող է հանդես գալ որպես վարկառու: Այդ մոտեցումն ակամա առաջ է բերում «Օրենքի առջև հավասարության» սահմանադրական սկզբունքի խախտում:

Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ համայնքներում հասարակության գերակշռող մասը պատկերացում չունի տեղական ինքնակառավարման մասին և այն ընկալում է որպես պետական կառավարում:

Համայնքների զարգացումը խոչընդոտող հանգամանք է նաև տեղական ինքնակառավարման մարմինների պետական մտածելակերպի բացակայությունը:

Համայնքները՝ որպես իրավահարաբերության ինքնուրույն սուբյեկտ, ի տարբերություն մարզերի, ունեն սեփական բյուջե, հետևաբար ունեն բյուջեի մասերի՝ եկամուտների աղբյուրների և ծախսերի ուղղությունների որոշման ինքնուրույնություն և անկախություն:

ՈՒՏումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքի բյուջեի միջոցները հիմնականում գոյանում են պետական բյուջեից ստացվող դուտացիաներից և սուբվենցիաներից, ինչպես նաև տեղական նշանակության որոշակի հարկերից և տեղական նշանակության տուրքերից, որոնք համայնքի եկամուտների շատ չնչին մասն են կազմում: Այնինչ տարբեր իրավական ակտեր համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման համար նախատեսում են բազմաթիվ ինքնուրույն աղբյուրներ:

ՀՀ սահմանադրության 105-րդ և 106-րդ հոդվածների համաձայն՝ համայնքի սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջումների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ: Համայնքի սեփական լիազորությունների մի մասն օրենքով կարող է սահմանվել որպես պարտադիր:

Պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս դրույթից բխում է, որ պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

Բացի այդ, պետությունը ներպետական և միջազգային մակարդակով ստեղծել է մի շարք իրավական երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս համայնքին սեփական բյուջեի մուտքերը ձևավորելու տարբեր աղբյուրներից: Մասնավորապես, համայնքի բյուջեի եկամուտները կարող են ձևավորվել պետական բյուջեից համայնքի բյուջեին կատարվող մասհանումներից, լրավճարներից (դոտացիա և սուբվենցիա), տեղական նշանակության հարկերից և տուրքերից, համայնքի սեփականությունը համարվող միջոցների վարձակալության հանձնելու շնորհիվ ձեռք բերած, ինչպես նաև համայնքի սեփականությունը համարվող գույքի իրացումից ստացված եկամուտներից և այլն: Համայնքի բյուջեի եկամուտների ձևավոր-

ման աղբյուր են նաև համայնքի բյուջե մուտքագրվող շահաբաժինները: Այսինքն՝ համայնքը՝ որպես իրավահարաբերության ինքնուրույն սուբյեկտ, իրավասու է հիմնադրելու տնտեսական ընկերություններ և տնտեսական ընկերակցություններ, արտադրական կոոպերատիվներ և այլ առևտրային կազմակերպություններ՝ իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, շահույթ ստանալու ակնկալիքով:


Վերը նկատված թերությունները տեղական ինքնակառավարման մարմինների, անգործության կամ ոչ նպատակային գործունեության հետևանք են, և դրանք հնարավորինս վերացնելու նպատակով կարելի է առաջարկել ՀՀ ընտրական օրենսգրքի 132-րդ հոդվածում լրացում կատարել և տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուներին ներկայացվող պարտադիր պահանջների շարքում ավելացնել նաև «անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն» եզրույթը: Այդ եզրույթի ամրագրումով և իրականացումով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար կա-



պահովվի իրավական դաշտի իրազեկություն, որը շատ կարևոր է տեղական ինքնակառավարման արդյունավետ իրականացման համար:

Հարկ է նաև օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների համար կազմակերպել պարտադիր վերապատրաստման դասընթացներ և ստեղծել այլ համայնքների հետ փորձի ուսումնասիրության մշակույթ, որը տեղական ինքնակառավարման մարմիններում կձևավորի պետական մտածելակերպ, գենդերային իրավահավասարության կարևորում և ամենակարևորը՝ պատասխանատվություն համայնքի բնակիչության առջև:





ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՐՁԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ

Հայ հասարակության կարևոր հիմնահարցերից մեկը հասարակության մեջ կանանց դերի ու տեղի, ժողովրդավարության հաստատման և մարդու իրավունքների ապահովման գործընթացում նրանց մասնակցությունն է:

Կլինի՞ արդյոք Հայաստանում բաց, սոցիալական կողմնորոշումով մարդասիրական հասարակություն. դա մեծապես պայմանավորված է կանանց հասարակական շարժման զարգացմամբ, հասարակության վերափոխումների հետագա գործընթացում կանանց ընդգրկվածության աստիճանով, ձևավորվող քաղաքացիական հասարակության ժողովրդավարական գործընթացներում կանանց քաղաքացիական դիրքորոշմամբ, մասնակցությամբ ու ակտիվությամբ:

Իսկ այդ զարգացումը, ընդգրկվածությունն ու ակտիվությունը կրազմապատկվեն, եթե հանրությանը հուզող կարևոր հիմնահարցերի առաջընթացում, դրանց լուծումների որոնման ռազմավարությունների մշակման համար կանանց հասարակական կազմակերպությունները, նաև քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդները, գործարար ոլորտի կանայք միավորեն իրենց գաղափարները, ջանքերն ու միջոցները, գործեն միասին ու համերաշխ:

Ստորև ներկայացնում ենք Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու, Արարատի, Կոտայքի մարզային կենտրոնների համադաստղներ Արմենուհի Կյուրեղյանի, Անահիտ աչատրյանի, Անահիտ Աղոյանի մտորումները կենտրոնների գործունեության մասին:



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԲԱՐԴ ԵՎ ԴԺՎԱՐԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԷԱԿԱՆ ԴԵՐ Է ՎԵՐԱՊԱՀՎԱԾ

Արմենուհի Կյուրեղյան

Քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնի համադաստղ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու

Ժողովրդավարությունը կառավարման այն ձևն է, որի պարագայում քաղաքացիները մասնակցում են պետության կառավարմանը, անմիջականորեն կամ ազատորեն ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով ստանձնում են որոշակի պարտավորություններ: Ժողովրդավարությունը ենթադրում է մեծամասնության կամքի արտահայտման համադրություն անհատների ու փոքրամասնության իրավունքների հետ: Ընդ որում, կառավարման ժողովրդավարական ձևը որդեգրած պետությունները պետք է առաջնորդվեն իշխանության ապակենտրոնացման սկզբունքով, հաշվի նստեն այն իրողության

հետ, որ տեղական ինքնակառավարման մարմինները հնարավորինս պետք է հասանելի լինեն ժողովրդին, արագ և արդյունավետ արձագանքեն նրանց կարիքներին ու մտահոգություններին:

Ժողովրդավարական հասարակություններին հատուկ են հանդուրժողականության դրսևորումը և համագործակցությունը հասարակության տարբեր ինստիտուտների միջև: Իսկ այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է հասարակության յուրաքանչյուր անդամի մասնակցությունը, յուրաքանչյուրը՝ իր չափով ու հնարավորություններով: Նման մասնակցության ապահովումը ենթադրում է, որ քաղաքացիները ստեղծեն անկախ խմբեր ու

փորձեն բավարարել իրենց լուրջ խնդիր, նույնիսկ մասնավորապես երկրի բնակիչների պահանջները, լրացնել իշխանության աշխատանքը, մասնավորապես նրա հետ: Նման կառույցներից են ոչ կառավարական կամ հասարակական կազմակերպությունները:

Հասարակական կազմակերպությունները հնարավորություն են ստեղծում քաղաքացիների համար զբաղվելու քարոզչությամբ, հանրության ուշադրությունը հրավիրելու կարևորագույն հասարակական հիմնախնդիրների վրա, վերահսկելու մասնավոր ձեռնարկների և իշխանության գործունեությունը, բարելավելու իրենց հանրության կյանքի որակը:

Հասարակական կազմակերպությունները ծառայում են քաղաքացիների բազմաբնույթ հետաքրքրությունների սպասարկմանը: Նրանք կարող են իրականացնել սոցիալական ծառայություններ, հանդես գալ շրջակա միջավայրի պաշտպանության օգտին, կյանքի մակարդակի և աշխատանքային ստանդարտների պաշտպանության օգտին կամ խթանել ժողովրդավարական փոփոխությունները:

Հասարակական կազմակերպությունները հաճախ ներկայացնում են այն քաղաքացիների հետաքրքրությունները, որոնք կարող են դուրս մնալ ազգային քաղաքական դեբատներից: Նրանք երկխոսության հնարավորություն են ստեղծում բոլոր տնտեսական, սոցիալական



խավերի, ինչպես մասնավորապես կանանց և փոքրամասնությունների համար, հանրության տարբեր շերտերի մեջ սերմանում են միասին աշխատելու մշակույթ, ձևավորում բավարար կառավարման համար անհրաժեշտ հմտություններ, հարաբերություններ և վստահություն:

Աշխարհի երկրների փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարության կառուցման գործում շահում են այն երկրները, որտեղ կառավարությունն ու հասարակական կազմակերպությունները

որ գործընկերության հարաբերությունների մեջ են, որի արդյունքում հասարակական կազմակերպությունները կարող են տրամադրել տեղական և տարածքային փորձագետներ, իշխանական մարմինների կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման համար՝ մասնագետներ ու կատարողներ: Այս դեպքերում գլխավոր սկզբունքն այն է, որ հասարակական կազմակերպությունները պետք է աշխատեն պետության կողմից հնարավորինս նվազագույն քաղաքական վերահսկողության ներքո:

Հասարակական կազմակերպությունները էական դեր ունեն այնպիսի ոլորտների համար տեղական և միջազգային ծրագրերի մշակման գործում, որոնք նպաստում են ժողովրդավարության սկզբունքների ամրապնդմանը.

- **մարդու իրավունքներ**՝ ներդնելով միջազգային ստանդարտներ, հետևելով խախտումներին ու չարաշահումներին,
- **օրենքի իշխանություն**՝ հնարավորինս էժան կամ անվճար իրավաբանական օգնություն, բոլոր քաղաքացիների իրազեկում իրենց իրավունքների, ինչպես մասնավորապես փոփոխությունների մասին,
- **կանանց մասնակցություն**՝ նրանց քաղաքական ակտիվության բարձրացմամբ և նրանց պաշտպանությամբ սոցիալ-տնտեսական խտրականության դրսևորումներից,
- **քաղաքացիական գրագիտություն**՝ ժողովրդավարական և տարատեսակ հասարակություններում քաղաքացիների դերի մասին տարբեր կրթական ծրագրերի իրականացմամբ,
- **անկախ զանգվածային լրատվամիջոցների առկայություն**՝ լրագրողների ուսուցմամբ, սահմանելով լրագրության էթիկայի ստանդարտներ,
- **քաղաքական կուսակցությունների զարգացում**՝ պատրաստված ներքին դիտորդների կողմից ընտրությունների վերահսկմամբ և ընտրողների

գրանցման անկուսակցական արշավներով, կառավարության հաշվետվողականություն՝ քաղաքական վերլուծության անցկացումով և կառավարության որոշումների վերահսկողությամբ:

Այսպիսով, քանի որ հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության միջուկն են, հիմքն են, հնարավոր չէ գերազանահատել նրանց դերը ժողովրդավարության կայացման գործում:





ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱՅՆՔՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՄԻԱՅՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անահիտ Խաչատրյան

*Քաղաքացիական նախաձեռնությունների
Արարատի մարզային կենտրոնի համադասող,
Ասոցիացիայի Արտաշատի մասնաճյուղի փոխնախագահ,
Արտաշատի քաղաքապետարանի սոցիալական
հարցերի և ծրագրերի բաժնի պետ*

Բնակչության բարեկեցության բարելավման նպատակով օրենքի շրջանակներում և սեփական պատասխանատվությամբ գործող տեղական ինքնակառավարման մարմինները կոչված են լուծելու համայնքային խնդիրները և տնօրինելու համայնքային սեփականությունը:

Համայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է, որտեղ համայնքի բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում:

Տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ավագանին, ստանձնելով իրենց պարտականությունները, ձեռնամուխ են լինում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացմանը:

Այդ ծրագիրը նպատակային և արդյունավետ իրականացնելու համար համայնքում պետք է ակնառու լինի կանանց և տղամարդկանց հավասարակշռությունը: Առաջին հերթին այդ հավասարակշռությունը կարող է նպաստել տվյալ համայնքում սոցիալական արդարության հաստատմանը, ժողովրդավարության խորացմանը, տեղական մակարդակներում քաղաքականության որակի բարձրացմանը, որով հնարավոր է դառնում առավելագույնս մոտենալ համայնքի անդամների կարիքներին:

Այն համայնքում, որտեղ համայնքի ղեկավարը կին է կամ ավագանու կազմում գերակշռում են կամ զգալի թիվ են կազմում կին անդամները, այնտեղ համայնքի հիմնախնդիրներին լուծում են տրվում տարբերակված մոտեցմամբ: Կանայք, զգալով իրենց լիարժեք քաղաքացի, բարձրացնելով լուծում պահանջող կարևոր հարցեր, իրենց համայնքի կառա-

վարման ծանր հոգսը կիսելով տղամարդկանց հետ, կստեղծեն ավելի ներդաշնակ, հանդուրժող և կայուն հասարակություն:

2010 թ. կառավարությունը հաստատեց Գենդերային քաղաքականության հայեցակարգը, որը հիմնված է այն գաղափարի վրա, որ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ձևավորման նախադրյալը գենդերային հավասարությունն է՝ որպես ժողովրդավարական գերակա արժեք, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման: Այն ուղղված է իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային պայմանների ստեղծմանը՝ բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման նպատակով:

Հայեցակարգը պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար հիմք է ծառայում գենդերային հավասարության ապահովման ծրագրային միջոցառումների մշակման գործում:

Գենդերային հայեցակարգն իրականացնելու նպատակով քաղաքապետարաններում և գյուղապետարաններում ստեղծվում են կանանց հիմնախնդիրներով զբաղվող հանձնաժողովներ, որոնց մեջ ընդգրկված են հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ակտիվ կանայք, քաղաքապետարանի բաժնի պետեր, ավագանու անդամներ:

Քանի որ համայնքները չեն կարող միայնակ իրականացնել կառավարության կողմից մշակված միջոցառումների ռազմավարական ծրագիրը, օգտագործում են քաղաքացիական հասարակության կառույցների ներուժը, այդ թվում քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնը, որն իր գործունեության ընթացքում սեմինարների,

կյոք սեղանների, հանդիպումների, լիդերության դպրոցների կազմակերպման միջոցով հաղորդում է գիտելիքներ քաղաքականապես հասուն, ակտիվ կանանց և հնարավորինս լսելի դարձնում նրանց ձայնը, մտորումները, հոգսերը:

Կենտրոնը, ամրապնդելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը, լայնածավալ աշխատանքներ է տարել՝ կապված սեպտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ:

Այդ առիթով կենտրոնի նախաձեռնությամբ Արտաշատում հիմնվել է կանանց լիդերության եռօրյա դպրոց «Կանայք և համայնքային ժողովրդավարությունը» խորագրով: Պարապմունքներին մասնակցում էր 18 կին Արտաշատից, Արարատից և Արտաշատի ենթաշրջանի գյուղերից: Ուսուցման նպատակն էր կանանց իրավական ու քաղաքական գիտելիքների մակարդակի բարձրացման, ընտրարշավի արդյունավետ կազմակերպման և անցկացման անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների զարգացման միջոցով խթանել նրանց ակտիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Նույն նպատակով կենտրոնի Արտաշատի մասնաճյուղի նախաձեռնությամբ անցկացվել են սեմինարներ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրված կանանց համար:

Շարունակելով իր համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ կենտրոնն ընտրություններից անմիջապես հետո կազմակերպեց հանդիպում տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված կանանց և նրանց աջակցող թիմերի ներկայացուցիչների հետ, որի նպատակն էր վերլուծել ընտրությունների արդյունքները, ինչը հնարավորություն կտա բացահայտելու նախընտրական գործընթացներում կանանց արդյունավետ մասնակցությունը խթանող գործոնները և վերհանելու այն դժվարությունները, խոչընդոտներն ու բացթողումները, որոնք հանգեցրին անհաջողության: Այսօր մեր նպատակն է տե-

ղական ինքնակառավարման մարմիններում ունենալ գրագետ, իր իրավունքներն ու պարտականություններն իմացող համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ, որոնց ակտիվ ու սրտանց գործունեությունից է կախված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Կենտրոնի նախաձեռնությամբ Վեդիում և Արտաշատում կազմակերպվեցին երկօրյա սեմինարներ, որին մասնակցում էին ընտրված ավագանու անդամները (հիմնականում՝ կանայք) և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ: Սեմինարների ընթացքում մասնակիցները ձեռք բերեցին գիտելիքներ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, ավագանու՝ որպես ինստիտուտի գործառույթների



մասին: Այդ ուսուցման ժամանակահատվածում նրանք ծանոթացան նաև համայնքի զարգացման քառամյա ծրագրի կազմման և դրա մեջ գեներային բաղադրիչի ներառման տեխնոլոգիաներին, քննարկվեցին շատ հարցեր՝ կապված տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի հետ:

Բնակչության շրջանում պետք է լայն բացատրական աշխատանք կազմակերպել տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց առաջադրվելու և ընտրվելու համար:

Այն կանայք, որոնք ցանկություն ունեն առաջադրվելու տեղական ինքնակառավարման մարմիններում, պետք է ձեռք բերեն



ընտրողների աջակցությունը: Անհրաժեշտ է ոգևորել և քաջալերել կանանց, տղամարդկանց հետ հավասար պայմանների դեպքում ընտրությունների ժամանակ ընտրել կանանց, օգնել նրանց մարդկային և ֆինանսական ռեսուրսներով:

Տեղական ինքնակառավարման մարմիններում առաջադրվող կանայք էլ իրենց հերթին պետք է քաջատեղյակ լինեն իրենց համայնքի հիմնախնդիրներին, կարողանան վերլուծել դրանք, առաջարկել լուծումներ և ամենակարևորը՝ հարգանք և հեղինակություն վայելեն բնակչության շրջանում:

Տղամարդկանց հարկավոր են իշխանության ճիշտ կիրառման լավ օրինակներ, որոնք կկողմնորոշեն նրանց: Ուրեմն որոշումներ կայացնող մարմիններում, այս դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում կանայք պետք է ստանձնեն ղեկավար մարմինների թեկուզ կես պատասխանատվությունը:

Ոչ մի տղամարդ և ոչ մի կին պաշտոնյա չի ծնվում, ուստի և՛ տղամարդիկ, և՛ կանայք հավասարապես օժտված են այդ աշխատանքի ունակություններով:

Կինը համատեղում է ընտանեկան կյանքն աշխատանքի հետ և տղամարդուն հավասար բնականոն ընտանեկան և մասնագիտական կյանքի իրավունքի պետք է:

Կանանց մասնակցությունն ինքնակառավարմանը կմեծանա, եթե տեղական մարմիններն իրականացնեն այն իշխանական լիազորությունները, որոնք ունեն թղթի վրա, մանավանդ՝ կապված ֆինանսների բաշխման և ծախսերի կառավարման հետ:

Կանայք հաջողության են հասնում միայն արդար ընտրություններում: Ռիստի հարկավոր է տեղական մակարդակում ստեղծել ազնիվ մրցակցային միջավայր: Դրա համար պետք է մեծացնել ավագանու անդամի ազդեցությունը:



ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՅՈՒՄԸ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ Է

Անահիտ Աղոյան

Քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի համադասող, ՀՀ առողջապահության նախարարության պետական համաճարակաբանության և հիգիենայի տեսչության Կոտայքի մարզային փորձագիտական «Նաիրի» մասնաճյուղի տնօրեն

Քաղաքացիական նախաձեռնությունների սկզբնավորման փուլում հնարավոր չէր ենթադրել, թե ինչ կարևորագույն դեր կարող է ունենալ քաղաքացիական նախաձեռնությունների մարզային կենտրոնների ստեղծումը հասարակության զարգացման, ժողովրդավարացման, սոցիալական գործընկերության գործընթացներում: Պետք էր իսկապես հեռատես լինել և մեծ ռազմավար՝ կենտրոնների նախաձեռնությունը կյանքի կոչելու համար:

Կենտրոնների շարունակական զարգացումը սկզբում, իհարկե, ոգևորեց պատասխանատուներին, որովհետև նրանք այն մարդիկ էին, որոնք առաջինը կարողացան տեսնել և գնահատել դրանց աշխատանքի արդյունքները: Հետագայում այդ հավատը մեծացավ՝ ընդգրկե-

լով Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի մասնաճյուղերը, տեղերում գործող այլ հասարակական կազմակերպությունները, այնուհետև նաև տեղական իշխանությունները: Նշված բոլոր կառույցներն աստիճանաբար գիտակցեցին, որ այդ կենտրոնները կարևոր գործառույթ են իրականացնում, որն էապես նպաստում է և՛ զարգացման գործընթացներին, և՛ ժողովրդավարացման գործընթացների կատարելագործմանը: Երկար ու դժվար էր այն ճանապարհը, որ անցան քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնները, բայց նաև արդյունքները մեծ եղան:

Կենտրոններն աճել են և դարձել ինստիտուցիոնալ, չեն վախճնում, ասել՝ հզոր, պրոֆեսիոնալ կառույցներ: Տարիների ընթացքում էապես բարձրացել է մասնաճյուղերի դերն ու

հեղինակությունը համայնքների կյանքում, այդ աստիճանական աճը նկատելի է բոլորի համար և՛ դրսից, և՛ ներսից: Բայց մասնաճյուղերը դեռ հստակ չեն դիտարկվում որպես ինքնուրույն գործող սուբյեկտներ: Դրանք մերքերևում են Ասոցիացիայի գործունեության բուրգում, մերք՝ նախաձեռնությունների կենտրոնների համատեքստում:

Անհրաժեշտ է, որ մասնաճյուղերը դառնան ավելի նախաձեռնող, ավելի գործնական և որդեգրեն գործունեության ավելի համակարգված մոդել: Բոլոր նախադրյալները կան այդպիսին դառնալու համար: Անհրաժեշտ են մի քանի հետևողական քայլեր:

Կարելի է ենթադրել, որ մասնաճյուղերի հզորացման գործընթացները սկսված են: Ներկա փուլում այն աշխատանքները, որ կատարվում են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների, համայնքների ղեկավարների, ավագանու անդամների հետ և կատարվել են նախքան ՏԻՄ ընտրությունները, կարող են լինել լավագույն խթանը Ասոցիացիայի մասնաճյուղերն առավել ակտիվացնելու համար:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրված կին թեկնածուները շատ առարկայական գնահատեցին այն գործնական աջակցությունը, որը ստացան իրենց ընտրական ողջ գործընթացում և շարունակում են ստանալ այդ աջակցությունն աշխատելու ժամանակ:

Իմ պատկեցամամբ՝ մասնաճյուղերի հետագա ակտիվացումը կարելի է շարունակել մասնաճյուղերի նախագահների համարձակ և նախաձեռնողական գործունեության շնորհիվ: Այդ փուլերը կարող են սահմանվել ընդլայնված քննարկման արդյունքում, կարող են լինել տեղին բնորոշ, առանձնահատուկ քայլեր: Այս պարագայում կարևորը նախաձեռնություններն են և դրանք իրականացնողները, որովհետև երկու դեպքում էլ աշխատելու դաշտ կա: Ուղղակի մասնաճյուղերի նախագահների մեջ պետք է գտնվեն այն մի քանի էնտուզիաստները, որոնք կձեռնարկեն ավելի ակտիվ և ավելի պատասխանատու գործունեություն: Այս դեպքում խնդիրը մարդկանց ճիշտ ընտրությունն է և նրանց ճիշտ ուղղորդումը:

Իհարկե, մասնաճյուղերի ակտիվ և ինքնուրույն գործունեության հիմնախնդիրներից մեկը նաև ավանդույթի բացակայությունն է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր գոր-

ծունեության ավանդույթներում հստակ դրված է կենտրոնաձիգ գործունեության մոդելը, այսինքն՝ եթե վերևից որոշվեց, վերևից ասվեց, առաջարկվեց կամ կազմակերպվեց, հստակ գործում է: Եթե թողնվում է մասնաճյուղերի հայեցողությանը, անորոշություն է, երաշխավորված չէ, որ կարվի որակով, ժամանակին, կարվի ըստ պատշաճի: Ըստ իս, խնդիրը հոգեբանությունը և մոտեցումներն են:

Այսինքն՝ եթե հրահանգավորվում կամ կազմակերպվում է վերևից, պատասխանատվության ռիսկը նվազում է, եթե դա ինքդ ես կազմակերպում, պատասխանատվությունը մեծանում է: Հնարավորության դեպքում բոլորն են պատասխանատվությունից խուսափում, եթե կա մեկը, որն այն կստանձնի, մյուս-



ները խուսանավում են: Այս դեպքում է, որ շատ կարևոր են մասնաճյուղի նախագահի որակները: Առաջին հայացքից ասվածը գուցե պարզ չի հնչում, բայց ակնհայտ է, որ մասնաճյուղի նախագահն իր բնույթով պետք է լինի լինի, ֆունկցիոնների դեպքում նա հազիվ թե հաջողության հասնի:

Ինստիտուցիոնալ առումով բավականին որոշակի են այն քայլերը, որոնք կատարել է Ասոցիացիան իր գործունեության ողջ ընթացքում՝ իրականացնելով կենտրոնախույս ղեկավարում: Դրա փաստացի վկայությունն են աշխատանքների հստակ բաժանումը՝ իր պատասխանատուներով, քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնների ստեղծումը, լիդերության դպրոցներում մրցութային դրամաշնորհային ծրագրերի իրականացումը, մասնաճյուղերի ինքնուրույն գործունեության խրախուսումը և այլ կարևոր հանգամանքներ, որոնք իրապես կարող են նպաստել ինքնուրույն գործունեության գործոնի հզորացմանը:



Իհարկե, կան նաև այլ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են մասնաճյուղերի ակտիվ և ինքնուրույն գործունեությունը: Դրանցից է նման գործունեության ավանդույթի բացակայությունը: Պարզ լինելու համար փորձեն հիշեցնել, օրինակ, որ երբ Հայաստանի անկախացումից հետո ներդրվեց բազմակուսակցական համակարգը, ժամանակ պետք եղավ, որ դա մտներ մեր մտածողության, մեր հոգեբանության, մեր մոտեցումների մեջ:

Մյուս դժվարությունն այն է, որ եթե անգամ Ասոցիացիայում բավականին հստակ են ձևավորված մասնաճյուղերի ակտիվ գործունեության խրախուսման մեխանիզմները, մյուս հասարակական կազմակերպություններն ու կուսակցություններն այդ սովորույթն ու ինքնավստահությունը չունեն, որպեսզի մեր մասնաճյուղերի գործունեությունը ներդաշնակվի միջավայրին:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիային հաջողվել է նույնիսկ ոչ նպաստավոր պայմաններում աշխատեցնել կենտրոնախույս կառավարման մոդելը: Իհարկե, այն գործել է Ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասրաթյանի փորձի և մոտեցումների շնորհիվ, բայց ամեն դեպքում մյուս հասարակական կազմակերպությունների համար որդեգրել այս քաղաքականությունը շատ ավելի հեշտ է, որովհետև այդ ճանապարհն Ասոցիացիան կարծես բացել է, ավանդույթ է ձևավորվել, որը կարելի է ընդամենը շարունակել:

Մասնաճյուղերի հզորացման քաղաքականությունը հնարավոր եղավ իրականացնել ոչ միայն բարի կամքի, այլև որոշ մեխանիզմների շնորհիվ, որոնցից մեկը քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոններն են:

Ասոցիացիայի մասնաճյուղերի ակտիվ գործունեության վրա է ապես կարող է ազդել հասարակական սեկտորի և, ընդհանրապես, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ինստիտուցիոնալացման ցածր մակարդակը, որը ճահճի նման քաշում է նաև առաջ գնադոցներին: Պատկերավոր լինելու համար համեմատեն դասարանների հետ: Այն դասարաններում, որտեղ լավ սովորողները շատ են, պայքար կա, մրցակցություն, դա ընդհանուր առմամբ բարձրացնում է և՛ դասարանի, և՛ դպրոցի մակարդակը: Իսկ այն դասարաններում, որտեղ սովորողները թույլ են, մրցակցություն չկա, իջնում է նաև լավ սովորողների առաջադիմությունը: Այսօր մեզանում ձևավորված գործելակերպն այդպիսին է, և դա չի նպաստում հասարակական սեկտորի զարգացմանը:

Իհարկե, առկա է նաև մեկ այլ առեղծված. կան շատ հասարակական կազմակերպություններ, որոնց ղեկավար մարմինները բավականին ուժեղ են, այսինքն՝ ուղղվածությունը կենտրոնաձիգ է և չի նպաստում մարզային կառույցների կամ մասնաճյուղերի հզորացմանը: Երբեմն այդ կազմակերպությունների ղեկավարները չեն էլ կարևորում դա, չեն էլ տեսնում դրա անհրաժեշտությունը: Բայց դրա անհրաժեշտությունը զգացվում է, և դա արդիական հիմնախնդիր է, մանավանդ որ այժմ շեշտը դրվում է սոցիալական գործընկերության, սոցիալական համագործակցության զարգացման վրա: Բնականաբար, սոցիալական գործընկերությունը ինքնանպատակ չէ, դրա վերընթաց զարգացումը կարող է նպաստել ժողովրդավարության հզորացմանն ու զարգացմանը: Այս գործընթացը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է, որ կայացած հասարակական կազմակերպությունները խնդիր դնեն նպաստել նաև այլ ՀԿ-ների և այլ կառույցների զարգացմանը:

Իսկ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի մասնաճյուղերի հզորացման համար պետք է խրախուսել առանձնապես ակտիվ մասնաճյուղերին, որոնք հանդես են գալիս նախաձեռնություններով, որոնց գործունեության արդյունքները գնահատում են համայնքի բնակիչները, տեղական ինքնակառավարման մարմինները:

Մասնաճյուղերի խրախուսման եղանակներն էլ կարող են տարբեր լինել: Օրինակ՝ կարելի է սահմանել «Լավագույն մասնաճյուղ» կամ «Լավագույն սոցիալական գործընկերություն» մրցանակներ:

Կարելի է նաև ստեղծել գնահատման աղյուսակ՝ ներառելով մի շարք չափանիշներ, օրինակ՝ մասնաճյուղի անդամների թիվը, անդամների թվի ավելացման ժամանակային և տարիքային ցուցանիշները, մասնաճյուղի անդամների ակտիվության աստիճանը, մասնակցության աստիճանը և այլն: Կարելի է ներառել նաև սոցիալական գործընկերության ցուցանիշները, արդյունքները, մասնաճյուղում ընդգրկվածների կարգավիճակի աճի միտումները:

Առաջարկությունս ընդամենը մոտեցում է, որը կարող է քննարկվել, կարող է և մերժվել, բայց գնահատման մեխանիզմը շատ կարևոր է:

Ջարգացման և ժողովրդավարության կայացման շատ նախադրյալներ և հնարավորություններ կան, պետք է ընդամենը ճիշտ ուղղորդել քաղաքացիների ներուժը, լինել հետևողական և նպատակասլաց:

Ամենակարևորը՝ պետք է հավատալ գործի հաջողությանը:



ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



2012 թ. կայանացած խորհրդարանական ընտրությունները արդիական դարձրեցին կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը թե՛ նրանց պատասխանատվության, թե՛ մեր երկրի համար կարևոր քաղաքական գործընթացների վրա ազդեցության ուժեղացման տեսանկյունից:

«Կանանց քաղաքական օրակարգում» ընդգրկված էին այն հիմնախնդիրները, որոնց լուծումը հասարակությունը կապում է իշխանության մեջ կանանց և տղամարդկանց հաշվեկշռված ներկայացվածության հետ:

Օրինաչափ էր, որ «Կանանց քաղաքական օրակարգը» ձևավորելու և քաղաքական կուսակցություններին ներկայացնելու տեսանկյունից առավելագույն ակնկալիքները կապվում էին կանանց հասարակական կազմակերպությունների հետ:

Ներկայացվող հարցերի լուծումն ակնկալվում էին բոլոր քաղաքական կուսակցություններից:



2012 թվականի մայիսի 3-ին տեղի ունեցավ կլոր սեղան-քանակե՛ «Կանանց քաղաքական օրակարգը» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի ընտրություններում»:


Կլոր սեղան-քանակե՛ն մասնակցեցին, մի կողմից, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության անդամներ և 17 մասնաճյուղերի ղեկավարներ և ակտիվիստներ, Կանանց հանրապետական խորհուրդ, «Հայտուր» սոցիալ-տնտեսական և մշակութային, «Աջակցություն իրավական պետությանը», «Հոգևոր Հայաստան», «Երևանի երկխոսության կենտրոն», «Համայնք և երիտասարդություն» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մյուս կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հայաստանի հանրապետական կուսակցությունից՝ ՀՀ ԱԺ ֆինանսա-վարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը, ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ, պատգամավոր Հերմինե Նաղդալյանը, ՀՀԿ կանանց խորհրդի անդամ, պատգամավոր Կարինե Աճեմյանն, Հայ հեղափոխական դաշնակցությունից՝ պատգամավորներ Լիլիթ Գալստյանը և Ռուզաննա Առաքելյանը ու պատգամավորության քեկնածուներ՝ ՀՀԿ կանանց խորհրդի անդամ, Երևանի Գր.Չոհրապի անվան ավագ դպրոցի տնօրեն Ռուզաննա Մուրադյանը, Վեդու թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Գրետա Գրիգորյանը, «Օրինաց երկիր» կուսակցությունից՝ ՕԵԿ կանանց խորհրդի նախագահ, Երևանի թիվ 186 դպրոցի տնօրեն Մարինե Քոչարյանը:

ՀՀ խորհրդարանական ընտրությունների «Կանանց քաղաքական օրակարգը» կանանց ձայնը լսելի դարձնելու և շատ հարցերի լուծում ստանալու հնարավորություն տվեց:

**«ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»
Վերլուծական տեսություն**



Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գ-ենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետները ներկայացնում են 2012 թ. խորհրդարանական ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի դիտարկումն ու գնահատումը, օրենսդրական ոլորտում և կառավարման համակարգի քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց մասնակցության որակական վերլուծությունը, կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող



բացասական գործելակերպի և կարծրատիպային պատկերացումների վերհանումը, հասարակության հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի բարձրացման և քաղաքական գործունեության ոլորտում նրանց ներկայացվածության ընդլայնման հանձնարարականները:



*Լրատուի այս համարը հրատարակվում է
«Կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական նախաձեռնությունները.
գեներային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում»
ծրագրի շրջանակներում*

**«ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ»
աջակցության շնորհիվ**

«Համալսարանական կրթությամբ կանայք»

լրատուի խմբագրական կազմ՝

*Ջենմա Հասրաթյան, Անահիտ Հարությունյան,
Իրինա Շահինյան, Լիլիթ Չաքարյան,
Գայանե Արմաղանովա, Անահիտ Ադոյան,
Արմենուհի Կյուրեղյան, Անահիտ Խաչատրյան:*

Տեքստի խմբագիր՝

Անահիտ Հարությունյան

Համակարգչային ապահովումը՝

Իրինա Շահինյանի

Ձևավորումը՝

Արթուր Բոյախյանի

**Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան
երախտագիտություն է հայտնում հեղինակներին՝
հոդվածները տրամադրելու համար:**

Երևան 0002, Սարյան 22, 12-րդ հարկ
Հեռ. /37410/ 53-68-02, Ֆաքս /37410/ 53-67-92
Էլ.փոստ awue.armenia@gmail.com

Տարածվում է անվճար

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54-49-82, 62-38-63
Էլ.փոստ info@asoghik.am